

Արամ Ս. Սայիյան

**ԱՐԱՐԱՏԻ 1926–1930 ԹԹ.
ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՅ Դաշնակցություն–Հոյբուն համագործակցության և տարածաշրջանային զարգացումների համատեքստում*

Բանալի բառեր – Արարատ, ՀՅ Դաշնակցություն, Հոյբուն, Արտաշես Մուրադյան, Իհսան Նուրի, Իբրահիմ Հըսսեթ Թելլի (Բրո), Ռուբեն, Թեյմուրթաշ, Ռեզա շահ, թուրքեր, բոլշևիկներ:

Ներածություն

Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը քուրդ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարի այն վճռորոշ հանգրվանն էր, երբ ցեղային հիմքի վրա բռնկվող ինքնաբերական շարժումներին փոխարինեցին անկախության համար պայքարն առաջնորդող համաքրդական ազգային կուսակցության՝ Հոյբունի կազմակերպական ջանքերը:

Դրանում մեծ դեր խաղաց Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում հաստատված ՀՅ Դաշնակցության քաղաքական, կազմակերպական և գաղափարական աջակցությունը: Հայոց պահանջատիրության և քուրդ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարի համար, հիրավի, ուղենշային նշանակություն ունեցան Արարատի ապստամբության արշալույսին՝ 1927 թվականին, Հոյբունի կողմից որդեգրված՝ Քուրդիստանի անկախությունը Սևրի պայմանագրի հիման վրա հռչակելու քաղաքական սկզբունքը և ընդհանուր թշնամու դեմ պայքարում հայ–քրդական տարածայնությունները մի կողմ դնելու վճռականությունը:

Արարատի ապստամբության ընթացքում ձեռք բերված հայ–քրդական

Հ (ԺԲ) փարի, թիվ 3 (47) հոլխ–մեպրեմբեր, 2014
ՎԷՆ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.09.2014:

զինակցության դասերն օգտագործվեցին 1970-ականներից կրկին վերելք ապրած Սփյուռքի Զինյալ պայքարի և քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ընթացքում: Այս իրողությունները վկայում են ընդհանուր թշնամու դեմ պայքարում երկու ժողովուրդների երկարաժամկետ համագործակցության լուրջ ավանդույթների առկայության մասին:

Ուստի՝ ներկայումս Մերձավոր ու Միջին Արևելքում շարունակվող աշխարհաքաղաքական վերադասավորումները հրամայաբար պահանջում են դասեր քաղել պատմությունից և անկեղծորեն առերեսվել ինչպես Հայոց ցեղասպանության մեջ քրդական գործոնի խաղացած զգալի դերակատարության փաստին, այնպես էլ քեմալական Թուրքիայի կողմից քուրդ ժողովրդի հանդեպ իրականացված ցեղասպանական գործողությունների դառը հետևանքներին:

1. Քրդական շարժման նոր հանգրվանը

1925 թ. Շեյխ Սայիդի ապստամբության պարտությանը հետևած հալածանքների ու զանգվածային ջարդերի պայմաններում քրդական շարժման առաջնորդները ստիպված էին մտածել իրենց քաղաքական կողմնորոշումների փոփոխության մասին, ինչի արդյունքում քեմալական շարժման առաջին տարիների թուրք-քրդական գործակցությանը փոխարինեց փոխադարձ օտարացումն ու թշնամանքը:

Ապստամբությունը ցույց տվեց նաև, որ քրդերն իրենց ինքնակազմակերպման հին՝ ցեղային-կրոնական ձևաչափով չեն կարող դիմակայել արդիականացող Թուրքիային ու նրա բանակին, որն իր պատրաստվածությամբ և հազեցածությամբ չէր զիջում եվրոպական շատ երկրների զինված ուժերին: Քրդական վերնախավը հասկացել էր, որ ցեղային գործելակերպն ու աշխարհայացքը շարունակում են անջրպետներ ստեղծել սեփական ժողովրդի առանձին հատվածների միջև, իսկ թուրքերը միասնական են, ուստիև կարողանում են հաղթող դուրս գալ: Անհրաժեշտ էր ստեղծել մի համաքրդական կազմակերպություն, որն աստիճանաբար ազգային-ազատագրական պայքարի մեջ կներգրավեր քուրդ ժողովրդի բոլոր հատվածներին:

Շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո քրդական վերնախավի թրքամետ հատվածը խիստ թուլացած էր: Եվ դա մեծ մասամբ՝ թուրքերի մեղքով, որոնք մահապատժի ենթարկեցին այնպիսի ազդեցիկ գործիչների, ինչպիսիք էին Հասան Հայրին, սեիդ Աբդուլքադիրը, իսկ շատերին էլ աքսորեցին երկրի արևմտյան շրջանները՝ դրանով թուլացնելով իրենց ազդեցությունը քրդերի շրջանում:

Այս պայմաններում դրական երանգներ էր ձեռք բերում քրդերի վերաբերմունքը հայերի ու ասորիների հանդեպ, ընդ որում՝ նման երևույթը փոխադարձ էր: Նրանց միավորում էին ընդհանուր ցավն ու սպառնալիքը և արյունարբու քեմալական բռնապետությունից օր առաջ ազատվելու նպատակը: Ուստի տարօրինակ չէր, որ շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո քուրդ գործիչները սկսեցին կապեր հաստատել

նորահաստատ հայկական Սփյուռքի քաղաքական շրջանակների ու ասորիների հետ: Հայերն, ի դեմս ՀՅ Դաշնակցության, քրդերին կարող էին օգնել կազմակերպական աշխատանքներով, որոնց հարուստ փորձը կուսակցությունը կուտակել էր Օսմանյան և Ռուսական կայսրությունների դեմ պայքարում, ինչպես նաև դրամով, զենքով և մարտական անցյալ ունեցող սպաներով ու զինվորներով: Իսկ ասորիները կարող էին աջակցել իրենց բազմաքանակ ջոկատներով:

Իհարկե, պնդել, թե կողմերի միջև տիրում էր լիակատար վստահություն և եղբայրություն, չի կարելի: Դեռևս թարմ էին մոտ անցյալի հիշողությունները, բացի այդ՝ լուծված չէր հողային հավակնությունների հարցը: Ուստի որպեսզի այն խաղաթուղթ չդառնար թուրքերի ձեռքին և չվիժեցներ հայ-քրդական համագործակցությունը, կողմերը որոշեցին վիճելի հարցերին անդրադառնալ թուրքերի նկատմամբ հաղթանակից հետո:


Այդ պայմաններում քրդական վերնախավում թրքամետ սեիդ Աբդուլքադիրից և Հասան Հայրիից հետո մեծացավ Բադրխանների և սեիդ Ռիզայի ազդեցությունը, որոնք աչքի էին ընկնում իրենց ընդգծված հակաթուրքական տրամադրություններով և հայերի նկատմամբ դրական վերաբերմունքով: Հենց նրանք էլ 1926–1927 թթ. ընթացքում բազմաթիվ հանդիպումներ ունեցան ՀՅ Դաշնակցության գործիչների հետ:

Քրդական տարբեր կազմակերպությունների համախմբման մեջ մեծ էր դաշնակցականների դերը: Ուստի Բադրխանների գլխավորությամբ Քուրդիստանի բոլոր մասերից ժամանած աշխարհիկ ու հոգևոր առաջնորդները և քրդական մտավորականության ներկայացուցիչները, որոնք 1927 թ. օգոստոսին կազմակերպված մի շարք տեղական ժողովներում դրել էին **Հոյբուն** կուսակցության հիմքերը¹, 1927 թ. հոկտեմբերի 5-ին համաքրդական համագումար կազմակերպեցին Լիբանանի Բրհանդուն ամառանոցային բնակավայրում՝ հայտնի դաշնակցական գործիչ Վահան Փափազյանի տանը: Նրանք ներկայացնում էին քրդական այնպիսի կազմակերպություններ կամ կուսակցություններ, ինչպիսիք էին «**Kürt Terkilat-i İgtimaye Cemiyeti**»-ն, «**Kürdistan Teal, Ceniyeti**»-ն, «**Kürt Millet Firkasi**»-ն և «**Kürt istiklal cemiyeti**»-ն: Ժողովում կազմակերպորեն ու գաղափարապես վերջնականապես բյուրեղացավ համաքրդական «Հոյբունական» (անկախական) կուսակցությունը, որը պետք է իր ձեռքը վերցնեք քրդական հարցի լուծման գործը, այդ թվում՝ գործողությունների կենտրոնացված ղեկավարումը: Այն ուներ Գործադիր կոմիտե, որի անդամներն էին Սուրեհյա, Ջեդեթ և Քյամուրան Բադրխանները, Մեմդուխ Սելիմ բեյը, Շահին բեյը: 1927 թ. հոկտեմբերի 28-ին Հոյբունը հռչակեց Քուրդիստանի անկախությունը՝ **Սևրի պայմանագրի համաձայն**, ինչպես նաև պատերազմ հայտարարեց Թուրքիային: Քուրդիստանի ժամանակավոր մայրաքաղաք հռչակվեց Արարատի լանջերին գտնվող **Քուրդավա** գյուղը, իսկ մշտական՝ **Դիարբեքիրը**²:

Առաջին համագումարում Հոյբունը ընդունեց իր քաղաքական պլատֆորմը, ինչը մոտակա ժամանակների գործողությունների ծրագիր էր և

1 Տե՛ս N. Dersini. Kürdistan tarihinde Dersim. Halep 1952. s. 255.
2 Տե՛ս A. Safrastyan. Kurds and Kurdistan. London, 1948, p. 84.

բաղկացած էր 5 կետից. «1) բոլոր կուսակցությունների, ընկերությունների, կազմակերպությունների լուծարումը և նրանց մուտքը Հոյբուն, 2) Թուրքիայի դեմ պայքարել այնքան, մինչև որ նա ձանաչի քրդերի իրավունքները սեփական հողերի վրա, 3) ընդհանուր ապստամբության նախապատրաստում, ինչի համար հարկավոր է նշանակել նոր ղեկավարի, վերակազմավորել քուրդ ապստամբների բոլոր ուժերը ռազմական կարգապահությամբ, սպառազինել նրանց և ստեղծել ապստամբության ընդհանուր կենտրոն, 4) կապեր հաստատել իրանական կառավարության և կուսակցությունների հետ, 5) հարաբերություններ հաստատել Իրաքի և Սիրիայի կառավարությունների հետ այդ երկրներում բնակվող քրդերի կողմից նվաճված իրավունքների ամրապնդման համար, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ ստեղծել տեղի քրդական վարչակազմերի հետ՝ հայտարարելով քրդերի կողմից այդ պետությունների հանդեպ նոր պահանջների բացակայության մասին»³:



Վահան Փափազյանը (Կոմս) Հոյբունի ղեկավարների հետ

Շուտով Հոյբունի ազդեցությունը մեծացավ. նրա անդամներ էին դառնում հեղինակավոր քուրդ առաջնորդներն ու գործիչները: Այսպես, 1929 թ. մարտին Թուրքիայի իրենց արտրավայրերից փախան և Հոյբունի ԿԿ-ի մեջ անդամագրվեցին Էքրեմ և Քադրի Ջեմիլ փաշաները⁴:

Իր ստեղծումից կարճ ժամանակ անց Հոյբունը տեղափոխվեց Սիրիայի՝ Թուրքիայի հետ սահման-

նակից շրջաններից մեկը, որտեղ կար հոծ քրդական բնակչություն, և ավելի հեշտ էր վերահսկել ապստամբությունների ընթացքը: Այստեղ նրա ազդեցությունը մեծացավ մասամբ ՀՅԳ-ի, իսկ մասամբ էլ ֆրանսիական իշխանությունների շնորհիվ, որոնք իրենց գաղութներում թույլատրել էին Հոյբունի գործունեությունը: Ըստ բրիտանական հետախուզության՝ հոյբունականներն առավել ակտիվ էին Իրաքի արևմտյան և Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններում, որտեղ, բացի քրդական հոծ բնակչությունից, կենտրոնացել էին նաև մեծաթիվ հայ գաղթականներ: Իրաքում Հոյբունի գլխավոր ներկայացուցիչն էր Շուքրի Մեհմեդը: Մյուս շրջանը, որտեղ եռանդուն կերպով գործում էին հոյբունականները, Արաբա-Բայազետ-Մակուն էր, որտեղ ակտիվ էին նաև Իրանի դաշնակցական գործիչները: Դա պայմանավորված էր Շեյխ Սաիդի ապստամբությունից հետո թուրքական հալածանքներից փրկվելու համար դեպի ԽՍՀՄ-ի սահմանները նահանջած և Արարատ լեռան վրա ապաստանելով՝ 1926-

3 Մեջբերումն ըստ՝ **Лазарев М.** С. Курдистан и курдский вопрос 1923–1945 гг., Москва, 2005, с. 105.
4 Տե՛ս **Z. Silopi.** Doza Kurdistan, Beyrut, 1969, s. 119.

ից այն քրդական շարժման հիմնական օջախի վերածած ուժերի ակտիվության հետ:

Հայ-քրդական դաշնակցության, իսկ ապագայում նաև՝ զինակցության հեռանկարը սկզբում անհանգստացնում էր Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, որոնք դրանում սեփական գաղութների՝ Իրաքի ու Սիրիայի կացությունն իրենց հսկողությունից բերելու գալու վտանգ էին տեսնում: Սակայն շուտով ավելի խոր ուսումնասիրելով իրավիճակը՝ բրիտանական հետախուզության բազմափորձ սպաները եզրակացրին, որ քրդերի համագործակցությունը հայերի հետ ստիպողական քայլ է, քանի որ նրանք ինչպես ֆինանսական, այնպես էլ կադրային ու կազմակերպական օգնության մեծ կարիք են զգում:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2. ՀՅԴ-ն և քրդական շարժումը

ՀՅ Դաշնակցությունը քենալական Թուրքիայի իշխանությունների դեմ պայքարում քրդերի հետ համագործակցության առաջին գործնական քայլերն արել էր դեռևս 1924 թ., սակայն այն ժամանակ «Ազադի»-ի ղեկավարությունը մերժեց դաշնակցականների առաջարկը: Բայց դա չխանգարեց, որպեսզի ՀՅԴ-ն իր աջակցությունը ցուցաբերի Շեյխ Սայիդի ապստամբությանը: Կան վկայություններ այն մասին, որ ՀՅԴ ղեկավարության ցուցումով բազմաթիվ հայ մարտիկներ իրենց մասնակցությունն են բերել թուրքերի դեմ մղված մարտերին: Ապստամբության պարտությունից հետո ՀՅԴ-ն ամեն կերպ աշխատում էր քրդական հարցի վրա բևեռել միջազգային հանրության ուշադրությունը: Մասնավորապես՝ ՀՅԴ Բյուրոյի ջանքերով հուշագիր ներկայացվեց քրդական հարցի վերաբերյալ 1925 թ. Մարսելում տեղի ունեցած միջազգային կոնգրեսին⁵:

Հետագա տարիներին ՀՅԴ օգնությունը քրդերին շարունակում էր միայն աճել: Հոյբունի ղեկավարությունը շուտով զգաց այն օգուտները, որ տալիս էր համագործակցությունը ՀՅԴ-ի հետ: Ի տարբերություն անգլիական ու ֆրանսիական գաղութային իշխանությունների, որոնք, օգտվելով քրդերի անօգնական վիճակից, շահագործում էին նրանց և վճռական պահին թողնում անպաշտպան, ՀՅԴ-ն իր վրա էր վերցնում պարտականությունների մեծ մասը՝ իրավունքը թողնելով անորոշ ապագային և անգամ վստահ չլինելով, թե հաղթանակի դեպքում քրդերը կկատարեն հայ ժողովրդի և ՀՅԴ-ի առջև ստանձնած պարտավորությունները:

Դեռ չէին սպիացել Հայոց ցեղասպանության ու դրան հետևած ժամանակաշրջանի վերքերը, կոտորածների և փոխվրեժի ժամանակ մարդիկ կորցրել էին իրենց ընտանիքներին, հարազատներին, ուստի հաճախ չէին ընդունում երեկվա թշնամու հետ համագործակցելու որոշումը: Նման վատատեսական մոտեցում կար ոչ միայն հայ ժողովրդի, այլև ՀՅԴ որոշ գործիչների մոտ: Նույնատիպ բարդությունների հետ բախվում էին նաև հոյբունականները, ուստի նրանց ղեկավարների ելույթները ոչ միայն ՀՅԴ-ի հանդեպ երախտագիտության արտահայտություններ էին, այլև հա-

2 (ժԲ) փարի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

Վեյ համահայկական համալսարան

5 Տե՛ս Гасратян М. А., Курды Турции в новейшее время, Ереван, 1990, էջ 153:

յերի նկատմամբ թուրքերի կողմից դարեր շարունակ սերմանված թշնամանքի վերացման՝ քուրդ հասարակությանն ուղղված կոչեր:

Հոյբունի առաջին համագումարի ժամանակ ընդունված քաղաքական հռչակագրի մեջ նշվում էր. «Համագումարը հայտարարում է, որ Հայաստանը և Քուրդիստանը, դարերով բնակեցված լինելով այս 2 ժողովուրդներով, հրաժարվում են ենթարկվել որևէ պետության և ձգտում են իրենց անկախությանը: Համագումարը հայտարարում է, որ այս երկու երկրները պատկանում են միայն հայ և քուրդ ազգերին»⁶: Իսկ մեկ տարի անց՝ 1928 թ., Սուրեհյա Բադրխանը, պարզաբանելով հռչակագրի իմաստը, գրում էր. «1927 թ. հոկտեմբերին Հոյբունը քուրդ ազգի և հայ ազգի ներկայացուցիչների անունից, միավորված լինելով ընդհանուր թշնամու՝ թուրքերի դեմ, իրագործեցին համընդհանուր հաշտեցում: Իմ ազգի անունից ես խիզախ հայ ժողովրդին հայտնում եմ խորը համակրանք և վստահեցնում եմ նրան հարգանքը առ նրա օրինական ազգային ձգտումը, որը հանդիսանում է անկախ, միացյալ Հայաստանը» (ընդգծումը մերն է-Ա.Ս.)⁷:

Հոյբունի մյուս հայտնի առաջնորդ Զ. Սիլոփին հետագայում խոստովանում էր, որ այդ ժամանակաշրջանում Հոյբունը չուներ ոչ մի դաշնակից երկիր կամ կազմակերպություն, ուստի հաշվի առնելով նման հանգամանքը՝ իրենք որոշում են համագործակցել հայերի հետ: Անդրադառնալով հաղթանակի դեպքում Քուրդիստանի և Հայաստանի ապագա սահմանների հստակեցման, ինչպես նաև հայերի կողմից ցուցաբերված նյութական օգնության փոխհատուցման հարցերին, որոնք բարձրացվում էին հայքրդական զինակցության հակառակորդ հայկական և քրդական խմբերի կողմից, նա նշում էր, որ դրանք պետք է լուծեին ապագա քրդական և հայկական կառավարությունները:

Զ. Սիլոփին առանձնահատուկ կերպով ընդգծում էր այն իրողությունը, որ ՀՅԳ-ի շնորհիվ էր պահպանվում կապը Հոյբունի և Արարատի ապստամբների, ինչպես նաև քրդական տարբեր համայնքների միջև, որոնք բնակվում էին Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում, ինչպես նաև այն փաստը, որ ԱՄՆ-ում և Եվրոպայում լույս տեսնող հայկական մամուլը կատարեց մեծ աշխատանք՝ քրդերի հանդեպ կանխակալ վերաբերմունքը փոխելու և հակաքրդական քարոզչությունը չեզոքացնելու նպատակով⁸:

ՀՅԳ-Հոյբուն համագործակցության ողջ ժամանակամիջոցում ՀՅԳ-ն միայն մեծացնում էր իր կողմից ցույց տրվող ինչպես նյութական, այնպես էլ բարոյական աջակցությունը: Մեծ էր նաև ՀՅԳ-ի դերը Հոյբունի ռազմավարության և մարտավարության մշակման գործում: Մասնավորապես՝ դաշնակցականների խորհրդով Հոյբունը հրաժարվեց համաքրդական ապստամբության, Քուրդիստանի չորս մասերի ազատագրման և միացյալ ու անկախ Քուրդիստանի գաղափարից: Սա ուներ 2 դրական հետևանք. **նախ**՝ մարդկային, նյութական և ֆինանսական բո-

6 Гасратян М. А., նշվ. աշխ., էջ 153:

7 Մեջբերումն ըստ՝ В. Никитин. Курды. Москва, 1964, էջ 153:

8 Տե՛ս Silopi Z., նշվ. աշխ., էջ 114, 116:

լոր միջոցները ծախսվելու էին միայն թուրքական Քուրդիստանի անկախության ձեռքբերման համար, և **երկրորդ**՝ Քուրդիստանի մյուս երեք հատվածներում գերիշխող երկրներն ու ժողովուրդները ոչ միայն թշնամաբար չէին վերաբերվելու քրդական ապստամբության հանդեպ, այլև ինչ-որ չափով պետք է աջակցեին քրդերին՝ թուրքերին ծանր վիճակի մեջ դնելու համար: Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ այս սարսափարարությունը ճիշտ էր. թե՛ Իրանը, թե՛ Ֆրանսիան և նույնիսկ Մեծ Բրիտանիան գաղտնի եղանակներով այս կամ այն չափով աջակցում էին Հոյբունին:

Իր կողմից ընդունված քաղաքական ծրագրում Հոյբունը նախատեսում էր մշտական եղբայրական կապեր հաստատել բարեկամ իրանական կառավարության և եղբայրական Իրանի ժողովուրդների հետ⁹: ՀՅԴ գործուն միջամտությամբ ընդունված այս ծրագիրը հետապնդում էր երկու նպատակ. **նախ**՝ թե՛ Իրանում և թե՛ Թուրքիայում բնակվող քրդական ցեղերը թշնամական գործողություններ չէին վարի իրանական կառավարության դեմ՝ հնարավորություն չտալով քեմալականներին օգտվելու նման իրավիճակից, և **երկրորդ**՝ Իրանի կառավարությունն ինքը քրդերի հանդեպ թշնամական գործողություններ չէր իրականացնի:

ՀՅԴ-ն քրդական պայքարին աջակցություն ցուցաբերելու համար ուներ սեփական դրդապատճառները. ա) քրդական շարժումը զարգանում էր Արևմտյան Հայաստանի տարածքում, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր հայ, ով հետաքրքրված էր իր հայրենիքի ձակատագրով, պետք է համակրանքով վերաբերվեր քրդական հարցի նկատմամբ, բ) անկախ Քուրդիստանի ստեղծումը ի չիք էր դարձնելու քեմալականների պանթուրքական ծրագրերի իրագործումը, գ) քրդական շարժումը թուլացնում էր Թուրքիան և դրանով նախադրյալներ էր ստեղծում միացյալ և անկախ Հայաստանի ստեղծման համար¹⁰:

ՀՅԴ-ն իր նպատակները մտադիր էր իրականացնել հետևյալ քայլերով. անմիջապես կազմակերպել հեղափոխական միջոցներով Թուրքիային տնտեսապես և քաղաքականապես վնասելու գործընթացը, համագործակցել քրդական շարժման հետ՝ հարաբերություններ հաստատելով Հոյբունի հետ և աշխատելով նրա շուրջը միավորել այլ քրդական հոսանքներ ու աշիրեթներ, ինչպես նաև համագործակցել այն աշիրեթների հետ, որոնք կիրաժարվեն միանալ Հոյբունին, ֆինանսավորել քրդական շարժումը, պայմանով, որ այդ գումարները ծախսվեն երկրում, բացի դրամական օգնությունից աջակցել քրդական ապստամբությանը՝ ուղարկելով ռազմական մասնագետ ղեկավարներ և խմբեր: Սակայն այդ ամենը քրդերը կստանային այն դեպքում, եթե շարժումը մնար Թուրքիայի տարածքում՝ «...առանց տարածվելու Պարսկաստանի և Իրաքի սահմանների մեջ»¹¹:

Ուստի ընդառաջելով քրդերի ցանկությանը՝ ՀՅԴ-ն 1927 թվականին Արարատ էր ուղարկել խնուսցի **Արտաշես Մուրադյանին**: ՀՅԴ նշանավոր

9 Տե՛ս **Гасратян М. А.**, նշվ. աշխ., էջ 152:

10 Ավելի մանրամասն տե՛ս **Гасратян М. А.**, նշվ. աշխ., էջ 152: Տե՛ս նաև **А. Акопов**. Курдский вопрос и дашнаки, «Большевик Закавказья», Тифлис, 1931, էջ 38:

11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 2:

գործիչ **Ռուբենը (Մ. Տեր-Մինասյան)** իր «**Քրդական գործը Պարսկաստանում**» արժեքավոր գրության մեջ հետազայում խոստովանում էր, որ Արտաշեսը կուսակցությունում աչքի ընկնող ուժ չէր, և նույնիսկ եղել էր նրան կուսակցությունից վտարելու պահանջ¹²: Սակայն գալով Արարատ՝ նա ամբողջովին կերպարանափոխվեց՝ դրսևորելով բացառիկ անձնագր-հություն, ցույց տալով, որ ինքը արտակարգ ունակությունների տեր անձնավորություն է, որոնց շնորհիվ առ այսօր քրդերի կողմից համարվում է ազգային հերոս: Արարատում Արտաշես Մուրադյանը վերցնում է **Զիլան բեգ** կամ **բեյ** (ըստ Ռուբենի՝ **Զելիմ խան**) կեղծանունը: Նրան հաջողվում է միավորել ոչ միայն Արարատի շուրջը բնակվող քրդերին և հաշտեցնել նրանց, այլև համախմբել Միփանի, Բինգյոլի, Արտազի, Խնուսի, Բասենի, Մուշի ցեղերին, իսկ որոշ ժամանակ անց, ճամփորդելով Արարատից դեպի արևմուտք և հյուսիս, Արտաշես Մուրադյանը միավորում և հաշտեցնում է Կողբի, Սուրմալուի, Կարսի քրդերին: Արտաշեսի հաջողությունները պայմանավորված էին նրանով, որ նա գերազանց տիրապետում էր քրդերենին և միակն էր այդ շրջանում, ով հասկանում էր գաղափարական և հեղափոխական գործունեությունից: Քրդերը գիտեին, որ նա հայ է, և նրա թիկունքին տեսնում էին հայերի, առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության ուժը, որին շատ էին հարգում, ընդունում էին նրա հեղինակությունը և ամենակարևորը՝ Արտաշեսն անշահախնդիր էր, կուսակցականներից ստացված գումարները չէր յուրացնում և մինչև վերջին լուսան օգտագործում էր ըստ նպատակի, քրդերի հետ հավասար կիսում էր նրանց կրած զրկանքները¹³:

Սակայն Արտաշես Մուրադյանին պակասում էր ռազմավարական մտածելակերպը՝ ընդարձակվող շարժումը ղեկավարելու համար, ուստի նա գտավ այն անձին, ով ունակ էր իրագործելու այդ գործը: Դա Իհսան Նուրին էր, ով բարձրագույն գինվորական կրթություն էր ստացել Ստամբուլում, ուներ կազմակերպական փորձ, ռազմավարական և մարտավարական գործողությունների հմտություն: ՀՅ Դաշնակցությանը հաջողվում է կազմակերպել Իհսան Նուրիի փախուստը իրանական աքսորավայրից, և Արտաշեսն ու Իհսանը 1927 թվականին անցնում են Արարատ, որտեղ մինչ այդ արդեն գործում էր Բրոյի (Իբրահիմ Հըսգե) կազմած կառավարությունը: Նրանց հաջողվում է Բրոյին ընդունել տալ Հոյբունի ազդեցությունը: Դա անհրաժեշտ էր նախ՝ Հոյբունի շնորհիվ այլ քրդական ցեղերից և ապա՝ ՀՅԴ-ից օգնություն ստանալու համար:

Արարատում Արտաշես Մուրադյանը և Իհսան Նուրին, որն Արարատի կառավարության կողմից ստացել էր փաշայի (գեներալի) կոչում, հաջողությամբ փոխլրացնում էին միմյանց: Իհսան Նուրին ապստամբների շրջանում միակ մտավորական և լայն աշխարհայացք ունեցող անձն էր, սակայն նա չէր կարողանում կազմակերպել քրդերին. դա անում էր Արտաշեսը, որն իրագործում էր Նուրիի ծրագրած գործողությունները: Նուրին թեև մարմնավորում էր վերցեղային մտածողություն ունեցող քրդական մտավորականությանը, սակայն մի քանի պատճառներով քրդերի

12 Թերևս դա կապված էր խորհրդային իշխանությունների հետ համագործակցելու շուրջ կասկածների հետ: Խմբ.:

13 Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, թ. 7:

մոտ չունէր այն հեղինակությունը, որն ուներ Արտաշես Մուրադյանը: Նախ՝ ամենակարևոր հանգամանքն այն էր, որ Իսսան Նուրիին քրդերէն չգիտէր, նրա կինը թուրք էր, ինչի հետևանքով քրդերը նրա մոտ հարազատություն չէին տեսնում, հետո՝ որպէս սպա և մտավորական, իսկ նիստուկացով՝ թուրք աղա, Նուրիին վեհանձնորէն էր վերաբերվում թուրք գերիների հետ, ինչը քրդերին առիթ էր տալիս մտածելու, որ նա կաշառված է ու մի օր անցնելու է թուրքերի կողմը: Ի տարբերություն Արտաշես Մուրադյանի՝ նա չէր կրում այն դժվարությունները, որոնք տանում էին մնացած քուրդ ապստամբները, այլ վարում էր բարեկեցիկ կյանք, որքան որ դա թույլատրում էին պայմանները: Տվյալ փաստը նա բացատրում էր այն հանգամանքով, որ դրսից ստանում է մեծ գումարներ, որոնք օգտագործում է իր կարիքները հոգալու համար: Եվ վերջին կարևոր հանգամանքը՝ Իսսանն անձամբ չէր շրջում քրդերի մեջ և զգուշանում էր նրանցից, ինչը փոխադարձ կասկածներն այն աստիճան խորացրեց, որ նա պահանջեց, որպէսզի իր թիկնապահները լինեն հայերը¹⁴:

Նման բացասական պահերով հանդերձ, շնորհիվ Արտաշես Մուրադյանի՝ Արարատի ապստամբական օջախն իրենից ներկայացնում էր մի կուռ միասնություն, որն արդէն 1927 թ. ամռանը տեղի ունեցած մարտերի ժամանակ ջախջախիչ պարտության էր մատնել թուրքական զորքերին: Դա խոր անհանգստություն էր առաջ բերել ինչպէս քեմալականների, այնպէս էլ խորհրդային իշխանությունների մոտ: Երկու կողմերի անհանգստության հիմնական պատճառը ՀՅԴ մասնակցությունն էր քրդական շարժմանը: Թուրքերը հասկանում էին, որ ՀՅԴ-ն ունակ է բարձրացնելու և բարձրացնում է քրդական ապստամբությունը որակապէս նոր մակարդակի, ինչն անասելի դժվարացնում է քրդերի շրջանում երկպառակություն սերմանելու քեմալականների ծրագրերի իրականացումը:

Ուստի պատահական չէր, որ 1928 թ. ընթացքում թուրքերին չհաջողվեց իրենց կողմը գրավել ապստամբությանը մասնակցող և ո՛չ մի ցեղի. նրանց ավարն ընդամենը մի քանի անհատներ էին: Թուրքիայի բնակչության աչքում Հոյբունը վարկաբեկելու նպատակով քեմալականներն Անկարայում հրատարակեցին «Կանաչ գիրքը»: Նրանում Հոյբունը հռչակվում էր «արևմտյան գործակալ»: Նշվում էր նաև, որ 1925 թ. Շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո քրդական շարժումը վերակեն-



Արտաշես Մուրադյանը և Իբրահիմ Հըսսէն Թելլին (Իրո)

¹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 8:

դանացավ Հոյբունի և մեկ այլ «արևմտյան գործակալ» ՀՅԴ-ի համագործակցության շնորհիվ¹⁵: Սակայն այդ գրքի հրապարակումը չունեցավ սպասվող ազդեցությունը, իսկ թուրքական կառավարության համար իրավիճակն օրեցօր ավելի էր բարդանում:

3. Արարատի ապստամբությունը և խորհրդա-իրանական հարաբերությունները

ՀՅԴ-ի ազդեցությունը Թուրքիայի քրդական ցեղերի վրա այնքան մեծ էր, որ հաջողվեց վիժեցնել քրդական շարժումն իրենց վերահսկողության տակ վերցնելու և այն Իրանի ու Մեծ Բրիտանիայի դեմ ուղղելու խորհրդային ղեկավարության փորձերը: Բայց քանի որ Արարատում իրավիճակին տիրապետում էր ՀՅԴ-ն, նրա դեմ թշնամանքի հողի վրա նորից տեղի էր ունենում ռուս-թուրքական մերձեցում, որն իր սուր սայրով ուղղված էր առաջին հերթին հայ-քրդական դաշինքի դեմ, սակայն վտանգ էր սպառնում նաև Իրանին և Իրաքին: Բոլշևիկների տագնապն էլ ավելի մեծացավ, երբ հայտնի դարձավ, որ դաշնակցականներն Արարատն օգտագործում են իբրև հենակետ՝ Խորհրդային Հայաստան իրենց մարդկանց ուղարկելու, ինչպես նաև այստեղ թաքնված կուսակիցներին հակառակ ուղղությամբ տարհանելու նպատակով: Ապստամբության հաջողության դեպքում, բնականաբար, սահմանամերձ շրջաններում մեծանալու էր ՀՅԴ ազդեցությունը, ինչն, անկասկած, անարձագանք չէր մնա Խորհրդային Հայաստանում:

Շուտով խորհրդային ՕԳՊՈՒ-ին¹⁶ (Միացյալ պետքաղվարչությանը) հաջողվեց պարզել, որ ապստամբության իրական կազմակերպիչը ՀՅԴ անդամ Արտաշես Մուրադյանն է: Խորհրդային հատուկ ծառայություններին, հայազգի չեկիստների շնորհիվ, 1928 թ. սկզբին հաջողվում է կապ հաստատել Արտաշես Մուրադյանի հետ և ներշնչել, թե իբր՝ խորհրդային իշխանությունները աջակցում են քրդերի պայքարին և համոզել նրան իջնել Արարատից ու անցնել Խորհրդային Հայաստան՝ զինամթերք և նյութական ու ֆինանսական օգնություն ստանալու նպատակով: Սակայն սահմանն անցնելուն պես Արտաշես Մուրադյանին ձերբակալում են Սադարակում և արքտրում Վորկուտա քաղաքը¹⁷: Նրա հետագա ձակատագիրն առ այսօր մնում է անհայտ:

Սակայն չեկիստների համար ակնհայտ էր, որ Ա. Մուրադյանի ձերբա-

15 Տե՛ս **Վահան Բայրուրդյան**, XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք-իրանական հարաբերությունները, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XXI, էջ 16:

16 ԽՍՀՄ ձևավորումից հետո ՌՍՖՍՀ-ի ՆԳԺԿ-ին կից ԳՊՈՒ-ի (Государственное политическое управление при НКВД РСФСР) հիման վրա՝ 1923 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների սովետին կից գործող ՕԳՊՈՒ-ն՝ Միացյալ պետքաղվարչությունը (Объединённое государственное политическое управление при СНК СССР)՝ պահպանելով քաղաքական ուստիկանության՝ **չեկայի** իր հայտնի գործառույթները: Իսկ Անդրֆեդերացիային կից գործող նրա անդրկովկասյան բաժանումները կրում էր ԳՊՈՒ (ՊԹՎ) անվանումը:

17 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 119, էջ 7:

կալումով խնդիրը լուծված համարել չի կարելի, քանի որ դաշնակցականների ազդեցությունը կայուն էր, նրանք կարող էին և անպայման կուղարկեին նոր մարդու, ինչպես նաև նյութական ու ֆինանսական միջոցներ: Անհրաժեշտ էր ոչնչացնել դաշնակցական կենտրոնը Պարսկաստանում՝ այդպիսով թուլացնելով Արարատի քրդերին և չեզոքացնելով Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ դաշնակցականների ակտիվությունը:

Սկզբնական շրջանում խորհրդային իշխանությունները դիվանագիտական ճանապարհներով պահանջում էին իրանական իշխանություններից՝ Իրանի տարածքում փակել ՀՅԴ-ն, նրա անդամներին կամ ձերբակալել, կամ էլ արտաքսել երկրից, իսկ ղեկավարներին ոչնչացնել: Բացի այդ՝ բոլշևիկները շահից պահանջում էին գործուն քայլեր ձեռնարկել Արարատի ապստամբներին ոչնչացնելու ուղղությամբ, ինչպես նաև՝ հասնել հայերի տեղաշարժի արգելմանը Մակուի և Ուրմիայի շրջաններում:

Սակայն Ռեզա շահը և նրա շրջապատը հոյակապ գիտեին, որ բոլշևիկները և քեմալականները Իրանում իրականացնում են քայքայիչ գործունեություն՝ Թուրքիայի և Իրանի քրդական ցեղերին սադրելով պատերազմական գործողություններ վարել կենտրոնական կառավարության դեմ: Ուստի ակնհայտ էր, որ դաշնակցականների ներկայության վերացումով վերանալու էր քրդերի վրա իրանամետ ուժի ազդեցությունը, և նրանք անմիջապես կընկնեն քեմալականների ու բոլշևիկների ազդեցության տակ:

Բացի այդ՝ դաշնակցականները լուրջ խոչընդոտ էին Իրանում բոլշևիզմի տարածման ճանապարհին, ինչն էապես նվազեցնում էր նրա ազդեցությունը երկրի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում: Իսկ այդ ազդեցությունը թթվածնի պես անհրաժեշտ էր Խորհրդային Ռուսաստանին, քանի որ Իրանը նրա մերձավորարևելյան քաղաքականության անկյունաքարային երկիրն էր, առանց որի այդ քաղաքականությունը դատապարտված էր ձախողման: Իրանը խաչմերուկ էր Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի և Հարավային Ասիայի (այսինքն՝ բրիտանական գաղութ Հնդկաստանի) միջև, ուստի իշխել այդ երկրում նշանակում էր ապահովել կովկասյան և միջինասիական խորհրդային հանրապետությունների լիակատար վերահսկողությունը, և միաժամանակ՝ կտրել բրիտանական գաղութներ Հնդկաստանի և Իրաքի միջև ցանաքային ու օդային կապը՝ սպառնալով նրանց անվտանգությանը:

Այդ նպատակներն իրականացնելու և Իրանում իր ազդեցությունն ամրապնդելու համար Խորհրդային Միությունն ուներ 3 տիպի լծակներ՝ ռազմաքաղաքական, տնտեսական և ազգային: Ընդ որում՝ խորհրդային դիվանագիտությունը ցանկանում էր Իրանում շարունակել ցարական Ռուսաստանի քաղաքականությունը, սակայն ավելի կոպիտ ձևերով, ինչը բխում էր նրա ռազմական թուլությունից: Այդ իսկ պատճառով Մոսկվան վարում էր ագրեսիվ տնտեսական քաղաքականություն, որն ավելի շատ հիշեցնում էր առևտրական պատերազմները: Բոլշևիկները անբարեխղճորեն օգտվում էին այն հանգամանքից, որ Իրանը եվրոպական շու-

կային կապող միակ երկաթուղային ճանապարհն անցնում էր Խորհրդային Միության տարածքով և պարբերաբար շանտաժի էին ենթարկում իրանական կառավարությանն ու վաճառականներին՝ նրանցից պահանջելով միակողմանի գիշումներ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական հարցերում:

Ցանկանալով նվազեցնել բոլշևիկների ճնշումը իրանական կառավարության վրա, բրիտանացիները առաջարկեցին կառուցել Հյուսիսային Իրան (Թավրիզ)–Տրապիզոն երկաթգիծը, որպես Ջուլֆա–Բաթում երկաթգծի այլընտրանք: Առաջարկը հավանության արժանացավ ինչպես Ռեզա շահի, այնպես էլ Մ.Քեմալի կողմից, ով մեծապես շահում էր այդ երկաթգծից ինչպես ապրանքաշրջանառության ծավալների մեծացման, այնպես էլ ռազմական փոխադրումների տեսանկյունից: Դա հնարավորություն կտար նաև թուրքական զորքերին ավելի արագ ճնշել քրդական ապստամբությունները և վերացնել խորհրդային զորքերի մանևրային առավելությունները, որը նրանք ունեին Բաթում–Թիֆլիս–Լենինական–Երևան–Ջուլֆա երկաթգծի շնորհիվ:

Բոլշևիկների գայրույթն էլ ավելի մեծացավ, երբ բրիտանացիները Ուրմիա լճում իրանական բանակի համար սկսեցին ստեղծել ռազմական նավատորմ: Բացի այդ՝ նրանք թույլտվություն ստացան Իրանի հարավարևմուտքի նավթային հարուստ շրջաններում կատարել նավթի արդյունահանում և Իրաքից Հնդկաստան ձգվող ճանապարհի վրա կառուցել օդանավակայաններ՝ բրիտանական այդ երկու գաղութների միջև թռիչքներ իրականացնող ինքնաթիռները վերալիցքավորվելու նպատակով: Խորհրդային դիվանագետները անընդհատ բողոքներ էին ներկայացնում իրանական կառավարությանն այս քայլերի դեմ, սակայն Ռեզա շահը, լավ հասկանալով, որ Խորհրդային Միությունն ի վիճակի չէ գեներով ստիպել կատարելու իր պահանջները, կտրականապես մերժեց նրանց: Ավելին՝ իրանական կառավարությունն ինքը իրանցի առևտրականների դեմ ստեղծվող արհեստական խոչընդոտների հետ կապված վճռական բողոք ներկայացրեց Մոսկվային՝ սպառնալով վերջ դնել խորհրդա-իրանական տնտեսական կապերին: Մոսկվան ստիպված էր առժամանակ զիջել, մինչև որ իր ուժերը կբավականացնեին Իրանի հանդեպ կոշտ քաղաքականություն իրականացնելու համար¹⁸:

Անհաջողություններ կրելով ռազմաքաղաքական և տնտեսական ճակատներում՝ Մոսկվան փորձում էր խաղի մեջ մտցնել ազգային խաղաքարտը: Սակայն այստեղ էլ հաջողությունները չնչին էին, քանի որ Արապատականի ազերիները գտնվում էին քեմալականների ազդեցության տակ, իսկ նրանց շահերը ներկայացնող «Մուսավաթ» կուսակցության կենտրոնակայանը տեղակայված էր Ստամբուլում: Բնականաբար, քեմալականները երբեք թույլ չէին տա, որ իրենց Թուրանի հետ կապող այդ ռազմավարական կամրջի վրա բոլշևիկներն ազդեցություն ձեռք բերեն: Իսկ ինչ վերաբերում է իրանական քրդերին, ապա այս հարցում քեմալականները որոշ դեպքերում գնում էին համագործակցության, քանի որ դա բխում էր երկուսի շահերից: Սակայն քեմալականները փորձում էին

¹⁸ Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1929, N 12, էջ 284:

քրդերին սադրել իրանական կառավարության և բրիտանացիների դեմ և նրանց հետ համագործակցելով՝ մատը մշտապես պահել զարկերակի վրա, որպեսզի քրդերի շրջանում չուժեղանար խորհրդային ազդեցությունը:

Ուստի խորհրդային ղեկավարությունը նախապես ՕԳՊՈւ-ի առջև պահանջ էր դրել կարճ ժամանակահատվածում Իրանում ստեղծել հուսալի գործակալական ցանց, որը պետք է իր մարդիկ ունենար պետական համակարգում և նրանց միջոցով ձեռք բերեր անհրաժեշտ տեղեկություններ ու տարածեր Մոսկվայի ազդեցությունը: Ընդ որում, այդ նպատակին հասնելու համար օգտագործվում էր ինչպես լեզալ հետախուզությունը՝ խորհրդային դիվանագիտական և առևտրական ներկայացուցչությունների միջոցով, այնպես էլ ոչ լեզալ գործունեությունը, երբ ՕԳՊՈւ-ի աշխատակիցները կեղծ փաստաթղթերով հաստատվում էին Իրանի որևէ քաղաքում ու սկսում էին հավաքագրել գործակալներ՝ հիմնականում նախկին Ռուսական կայսրության հպատակներից, որոնք հեղափոխությունից հետո հաստատվել էին այնտեղ:

Ռեզա շահը չէր ցանկանում թուրքերի և բոլշևիկների թելադրանքով փակել ՀՅԴ-ն՝ ինքն իրեն զրկելով նման կարևոր դաշնակցից: Սակայն Իրանն այն ժամանակ չափազանց թույլ պետություն էր և չէր կարող դիմակայել խորհրդայն-թուրքական միացյալ սպառնալիքներին: Բացի այդ՝ հանուն դաշնակցականների, Ռեզա շահը չէր ցանկանում գժտվել Մոսկվայի հետ և չափազանց խոցելի դառնալ Մեծ Բրիտանիայի առջև, որից եկող վտանգն ավելի իրական էր, քան բոլշևիկյան Ռուսաստանինը: Նույնը վերաբերում էր Թուրքիային, քանի որ շահը լավ գիտակցում էր, որ քրդերի ապստամբությունը ճնշելու համար, որի մեջ ակտիվորեն մասնակցում էին դաշնակցականները, Քեմալը կանգ չի առնի ոչնչի, այդ թվում՝ Իրանի տարածք ներխուժելու առջև:

Սկզբնական շրջանում պատասխանելով խորհրդային դիվանագետների՝ Իրանի տարածքում դաշնակցականների ու նրանց մարտական ջոկատների գործունեության թույլտվության դեմ բողոքին՝ իրանցի պաշտոնյաներն ամեն կերպ հերքում էին դրանց գոյության փաստը, իսկ դաշնակցական գործիչների համար պատասխանում էին, որ նրանք Իրանում են գտնվում որպես քաղաքական տարագիրներ՝ օգտվելով պարսիկ ժողովրդի հյուրասիրությունից, և քաղաքականությամբ չեն զբաղվում¹⁹: Հասկանալի էր, սակայն, որ այդպիսի պատասխանները ամենևին էլ չէին գոհացնելու բոլշևիկներին:

Ուստի իրանական իշխանությունները որոշեցին դիմել խորամանկության. արտաքուստ նրանք թշնամական դիրք բռնեցին ՀՅԴ-ի ու քրդերի հանդեպ, սակայն ներքուստ ցանկանում էին, որ քրդերը հավատարիմ մնան իրենց և սեփական պատերազմը վարեն բացառապես Թուրքիայի տարածքում: Այս երկակի քաղաքականությունը տեղական պաշտոնյաների համար ստեղծեց մանրելու մեծ հնարավորություն, ուստի վերջիններս վարվում էին այնպես, ինչպես որ իրենք ցանկանում էին՝ չվախենալով Թեհրանի վերաբերմունքից: Նրանք բաժանվեցին երկու խմբի. **առաջինը**

19 Տե՛ս «Դրոշակ», 1929, N 12, էջ 284:

կողմնակից էր պաշտոնական, իսկ **Երկրորդ** խումբը՝ ոչ պաշտոնական տեսակետին: **Առաջին** խմբի մեջ մտնում էին հիմնականում թյուրքալեզու քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները, որոնք պանթուրքիստական գաղափարախոսության ջատագովներ էին, կամ այն պաշտոնյաները, ովքեր կողմնակից էին բոլշևիկների հետ մերձեցմանը, կամ էլ ուղղակի գնված էին նրանց կողմից: Իրենց իրավասությունների սահմաններում նրանք հալածում էին հայերին, հատկապես՝ դաշնակցականներին, իսկ քրդերի հանդեպ վարում էին շատ դաժան քաղաքականություն՝ ընդհուպ ամբողջ ցեղերի արքայներն ու բնաջնջումները: Նրանցից էին, մասնավորապես, գեներալ Նախիջևանսկին և Իրանական Ադրբեջանի նահանգապետը: **Երկրորդ** հոսանքը, որը գլխավորում էին շահը և իրանական գորքերի ընդհանուր հրամանատար Զաֆար Դովլեն, իհարկե, գոհ էր, որ ՀՅԴ-ի շնորհիվ տեղի քրդերին հաջողվեց դուրս հանել թուրքերի ու բոլշևիկների ազդեցությունից և պատերազմը տեղափոխել Թուրքիայի տարածք, և որ ՀՅԴ-ի շնորհիվ Հյուսիսային Իրանում չեզոքացվում է պանթուրքիստական և բոլշևիկյան քայքայիչ գործունեությունը²⁰:

Սակայն ցավալին այն էր, որ շահը և նրա համախոհները ոչ մի աջակցություն չէին ցուցաբերում ՀՅԴ-ին, իսկ ահա առաջին հոսանքի կողմնակիցները բացահայտորեն դիմում էին հալածանքների, որին շահը չէր կարողանում առարկել՝ լինելով իր իսկ կողմից հրապարակված պաշտոնական տեսակետի գերին: Արդյունքում՝ Ատրպատականում սկսվում է հայերի հալածանքը, արգելվում է նրանց մուտքը Մակու, բազմաթիվ քրդեր և դաշնակցականներ են ձերբակալվում, իսկ Սալմաստ և Ուրմիա քաղաքների դաշնակցականներն արքայվում են:

Թավրիզում տեղական իշխանությունները Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանից և տեղի ՀՅԴ մասնաճյուղից պահանջել էին իրենց հանձնել Արտաշես Մուրադյանին: Սակայն, ինչպես նշվեց, նա շուտով ձերբակալվում է բոլշևիկների կողմից՝ Սադարակում ընկնելով Մակուի խորհրդային հյուպատոսի և Նախիջևանի ՕԳՊՈ-ի կողմից լարված թակարդի մեջ²¹: Դրանից հետո հավանաբար վերջիններիս տեղեկատվության հիման վրա իրանական իշխանությունների կողմից ձերբակալվում է Արտաշեսի նամակատարը՝ Թավրիզի կոմիտեին ուղղված Արտաշեսի նամակներով հանդերձ, որտեղ նա հայտնում էր ապստամբներին սպառազինությամբ օգնելու բոլշևիկների պատրաստականության մասին: Այս փաստը խիստ բացասաբար ազդեց ՀՅԴ-ի հեղինակության վրա, քանի որ իրանական կառավարությունը սկսեց կասկածել դաշնակցականներին բոլշևիկների հետ գաղտնի կապերի մեջ, որոնք իբր՝ ուղղված էին Իրանի ինքնիշխանության դեմ:

Մինչ այդ՝ ցանկանալով վերջնականապես փակել ՀՅ Դաշնակցության հարցը՝ խորհրդային իշխանություններն իրենց դիվանագիտական ներկայացուցիչների և մասնավորապես՝ Թավրիզում խորհրդային հյուպատոս Դավթյանի միջոցով իրանական կառավարությանն էին ներկայացրել ՕԳՊՈ-ի կողմից ձեռք բերված տեղեկությունները՝ դաշնակցական-

20 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 11:

21 Տե՛ս նույն տեղում, թ. 6:

ների և քրդերի, ինչպես նաև Փարիզում գտնվող ՀՅԴ Բյուրոյի և Իրանի տարբեր քաղաքների դաշնակցական կոմիտեների միջև եղած գաղտնի նամակագրական կապի մասին: Որքան էլ զարմանալի լինի՝ Իրանում գործող ՕԳՊՈւ-ի աշխատակիցների մեծ մասը հայեր էին, որոնց ղեկավարն էր բազմափորձ և հմուտ Գեորգի (կամ Գրիգորի) Աղաբեկովը (իսկական ազգանունը՝ Հարությունով):

Նախապես ՕԳՊՈւ-ն տեղեկություններ ուներ, որ ՀՅԴ Թավրիզի կոմիտեն ոչ միայն օգնում է քրդերին, այլև կապեր է պահպանում Խորհրդային Հայաստանում թաքնված իր կուսակիցների, ինչպես նաև այլ ընդդիմադիր ուժերի հետ՝ պարբերաբար այնտեղ ուղարկելով իր մարդկանց, որոնք բերում են ոչ միայն նամակներ, այլև գումար՝ ընդհատակյա գործունեությունը շարունակելու համար: Այդ նամակները ձեռք բերելու գործը Աղաբեկովը հանձնարարել էր Թավրիզ գործուղված ՕԳՊՈւ-ի աշխատակից Մինասյանին: Խնդրի բարդությունն այն էր, որ ՀՅԴ ողջ նամակագրությունը կողավորված էր և բացի այդ՝ գրված էր քիմիական թանաքով: Սակայն Մինասյանին հաջողվում է իմանալ կողը և քիմիական թանաքի բաղադրությունը, իսկ որոշ ժամանակ անց նաև կաշառել Թավրիզի փոստի բաժանմունքի պաշտոնյաներից մեկին, որը նրան տալիս էր դաշնակցականների և մուսավաթականների նամակները պատճեններ հանելու նպատակով²²:

Այսպիսով՝ չեկիստները դեռևս մինչև Արտաշես Մուրադյանի ու նրա նամակատարի ձերբակալությունները, գիտեին Իրանում ՀՅ Դաշնակցություն գործունեության կոնկրետ նպատակների մասին, քանզի նախապես նրանց ձեռքն էին անցել Եղիշե Իշխանյանի զեկուցագրերը ՀՅԴ Փարիզի ղեկավարությանը, որտեղ նա հայտնում էր Արտաշես Մուրադյանի՝ Արարատից ուղարկած զեկույցների և ծրագրերի, ինչպես նաև Խորհրդային Հայաստանում գործող դաշնակցական ընդհատակյա կառույցի մասին: Այս տեղեկությունների հիման վրա դեռևս 1927 թվականին Թիֆլիսում գտնվող Անդրֆեդերացիայի Պետքաղվարչությունը բացահայտել էր Խորհրդային Հայաստանում, Վրաստանում ու Լեռնային Ղարաբաղում գործող ՀՅԴ ընդհատակյա կառույցը և ձերբակալել նրա անդամներին²³:

Ուստի Ե. Իշխանյանի և Ա. Մուրադյանի, ինչպես նաև Փարիզի միջև նամակագրությունը Թավրիզում խորհրդային հյուպատոս Դավթյանը տրամադրել էր Իրանի ամենաազդեցիկ նախարարին՝ Թեյմուրթաշին: Այդ նյութերը հանձնվեցին նաև Թավրիզի թուրքական հյուպատոսին, և թուրքական կողմը ստացավ շատ կարևոր տեղեկություններ Արարատի ապստամբությանը դաշնակցականների մասնակցության վերաբերյալ²⁴:

Այսպիսով՝ խորհրդային և թուրքական իշխանություններն ունեին անհերքելի ապացույցներ Իրանի տարածքից իրենց երկրների դեմ իրականացվող գործողությունների մասին, և իրանական կառավարությանը ոչինչ չէր մնում անելու, քան արդեն պետական մակարդակով վերսկսելու

22 Տևն Գ. **Агабеков**. Секретный террор. Москва, 1996. с. 206.

23 Այս մասին վերջերս բացահայտված փաստաթղթերի հիման վրա պրոֆ. Վ. Ղազախեցյանի կողմից շուտով կտպագրվի առանձին ուսումնասիրություն: Խմբ.:

24 Տևն Գ. **Агабеков**, նշվ. աշխ., էջ 332:

դաշնակցականների և քրդերի ձերբակալություններն ու աքսորը: Նրանց զայրացրել էր հատկապես դաշնակցականների գաղտնի նամակագրությունը և առանց իրենց իմացության՝ հարևան երկրների տարածքում իրականացվող գործողությունների մասին տեղեկատվությունը:

Իրանի կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից սկսված հավաճանքները ծանր կացության մեջ դրին ՀՅԴ ղեկավարությանը: Տեղի ունեցավ Բյուրոյի նիստ, որի ժամանակ որոշվեց Արարատին օգնության ցուցաբերումը շարունակելու նպատակով կասեցնել ցանկացած շփում Իրանի տարածքից, սակայն Բյուրոն չդադարեց ապստամբներին օգնել Թուրքիայի դեմ պայքարում: Այդ նպատակով ՀՅԴ Բյուրոն պաշտոնապես քուրդ ապստամբներին օգնություն ցուցաբերելը պետք է վերցնել իր վրա և իրագործեր այն իր ներկայացուցչի միջոցով: Իսկ տեղի դաշնակցական կոմիտեները և Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը պետք է իշխանություններին բացատրեին, թե քրդերին օգնում է Բյուրոն, և իրենք անկարող են ինչ-որ բան անել, իսկ ծածկագիր նամակների հետ կապված, նրանք պետք է հաղորդեին, որ ծածկագիրը գտնվում է Փարիզում և նրանք Իրանի դեսպանի միջոցով կուղարկեն այն: Այդպիսով ՀՅԴ-ն քայլ էր կատարում սրված հարաբերությունները մեղմացնելու նպատակով, քանի որ վստահ էր, որ իր նամակներում արտահայտված չէր որևէ հակաիրանական միտք:

Միևնույն ժամանակ՝ դաշնակցական գործիչները փորձում էին համոզել իրանական իշխանություններին, որ **նախ**՝ քրդական շարժումը գոյություն ունի անկախ ՀՅԴ դիրքորոշումից, և քանի որ կուսակցությունը Թուրքիայում ունի քաղաքական շահեր, ապա իրենք քրդերին դիտում են որպես բնական դաշնակիցներ, բայց միայն՝ Թուրքիայի սահմաններում, **երկրորդ**՝ քրդերն ունեն սադրողներ, ի դեմս բոլշևիկների և քեմալականների, որոնք ցանկանում են նրանց ուղղել Իրանի դեմ, սակայն ՀՅԴ ներկայությունը ի չիք է դարձնում այդ ծրագրերը, և **վերջապես**՝ Արտաշես Մուրադյանի ձերբակալությունից հետո ՀՅ Դաշնակցությունը Արարատում չունի և ոչ մի ներկայացուցիչ²⁵: Այդ պարզաբանումը ուղարկվեց Թեհրան ու թեև որոշ զինվորական պաշտոնյաներ համամիտ էին դաշնակցականների հետ, սակայն իշխանության վերին օղակի՝ շահի և կառավարության պատասխանն ուշանում էր: Այս հանգամանքն էլ ավելի էր բարդացնում առանց այդ էլ լարված իրավիճակը՝ կապված Արարատի շուրջը թուրքական բազմաքանակ զորքերի տեղակայման, Ատրպատականի հայության վատթարացող վիճակի և կոլեկտիվացման հետևանքով Անդրկովկասում ու մասնավորապես՝ Խորհրդային Հայաստանում սկսված լուրջ շարժումների հետ:

25 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թթ. 12-13:

4. ՀՅԴ-ի համագործակցությունն Իրանի իշխանությունների հետ Արարատի ապստամբության շրջանում

1929 թ. մարտի 17-ին իր աշխատանքները սկսած ՀՅԴ 11-րդ Ընդհանուր ժողովը հատուկ ուշադրություն դարձրեց հայ-քրդական զինակցության խնդրին և Իրանի հետ բարեկամական հարաբերությունները պահպանելու անհրաժեշտությանը: Ժողովում քննության ենթարկված քաղաքական հարցերի՝ Սիմոն Վրացյանի կազմած ընդարձակ ամփոփագրում նշվում էր. «Քիւրդ ժողովրդի ազգային զարթօնքը, քրդական ազատագրական պայքարը իրերի տրամաբանութեամբ ուղղւած է Թիւրքիայի դէմ, որով-հետև այստեղ է Քիւրդիստանի ազատութեան բանալին: Այս հողի վրա քրդական և հայկական շահերը զուգադիպում են, և քաղաքական մեծ սխալ կը լինէր, եթէ այդ երկու ժողովուրդների կենդանի ուժերը ջջանային ստեղծել պայքարի մէկ ճակատ: Այդ ճակատը ուղղւած պէտք է լինի միայն Թիւրքիայի դէմ և չպիտի ծաւալի Պարսկաստանի և Իրաքի սահմաններում. **Քրդական գործի յաջողութիւնը հէնց թելադրում է այդ, մի բան, որ թոււմ է, թէ քիւրդ ղեկավարներն էլ ըմբռնել են լա** (ընդգծումը մերն է-Ա.Ս.)²⁶»:

11-րդ Ընդհանուր ժողովի որոշումներն ի կատար ածելու և իրանական կառավարության հետ առաջացած խնդիրները հարթելու նպատակով 1929 թ. վերջին կեղծ անձնագրով Թեհրան է ուղևորվում Ռուբենը (Մ. Տեր-Մինասյան) և տեղ հասնելուն պես տեսակցություն է խնդրում պալատական նախարար Թեյմուրթաշից, որին համարում էին Իրանի փաստացի կառավարիչը: Թեյմուրթաշն անմիջապես ընդառաջեց նրան և հանդիպման ժամանակ շարադրեց իրանական իշխանությունների տեսակետները հայերի, բոլշևիկների, քրդերի և թուրքերի վերաբերյալ, ըստ որոնց՝ Իրանը բնական էր համարում Հայաստանի անկախությունը կամ դրա իրագործման հետապնդումը, և եթե հայերն իրենց առջև չէին դնում Պարսկահայաստան ստեղծելու նպատակ, ապա Հայաստանի անկախությունը դեմ չէր Իրանի շահերին: Անդրադառնալով հյուսիսային հարևանի հետ փոխհարաբերություններին՝ Թեյմուրթաշն ընդգծում էր, որ բոլշևիզմը վտանգավոր է Իրանի ներքին կյանքի համար, իսկ շտրիխվ ՀՅ Դաշնակցության՝ կանխվում է նրա տարածումը Իրանում: Սակայն խորհրդային իշխանության դրացիությունը ավելի նպաստավոր է Իրանի շահերին, քան ցարական Ռուսաստանինը: Այդ իսկ պատճառով իրանական կառավարությունը դեմ է, որպեսզի ՀՅԴ գործունեության պատճառով վատանան խորհրդա-իրանական հարաբերությունները: Իսկ դա նշանակում էր նաև, որ Իրանը դեմ էր Կովկասի սահմաններում վերջինիս հակաբոլշևիկյան գործունեությանը: Գալով քրդական խնդրին՝ Թեյմուրթաշը նշեց, որ Իրանը բացասաբար է վերաբերվում քրդական շարժմանը, քանի որ թեև նրանք պարսիկների ցեղակիցներն են, սակայն ցանկանում են Իրանի տարածքի մի մասն անջատել նրանից և ստեղծել Քուրդիստան:

26 Ս. Վրացեան, Քաղաքական խնդիրները ՀՅ.Դ. 11-րդ Ընդհանուր ժողովում, «Դրօշակ», Փարիզ, 1929, N 4-5, ապրիլ-մայիս, էջ 76:

Այդ իսկ պատճառով ցանկալի չէ քրդերին միավորել մեկ կուսակցության մեջ, և պաշտոնական Թեհրանը կտրուկ դեմ է ինչպես իր տարածքում Հոյբունի գործունեությանը, այնպես էլ Դաշնակցություն-Հոյբուն համագործակցությանը: Իսկ ինչ վերաբերում է թուրքերին, ապա, ըստ նրա, իրանական կառավարությունն, իհարկե, տեղյակ է Ատրպատականում պանթուրքիստների գործունեության մասին, և հայերի հակաթուրքական դիրքորոշումը բխում է պարսիկների շահերից, բայց ցավալի է, որ Թուրքիայի արևելյան նահանգներում հայեր արդեն չկան, և Իրանի ցանկությունն է արևելյան նահանգներում քրդերին փոխարինել հայերով, որը, սակայն, գործնականում անհնար է²⁷:

Ռուբենն իր հերթին Թեյմուրթաշի հարցերին տվեց սպառնալից պատասխաններ, որոնք դեմ չէին Իրանի շահերին: Կապված իրանական կառավարության՝ հայերի կողմից Պարսկահայաստան ստեղծելու մտավախության հետ՝ Ռուբենն ամենայն պատասխանատվությամբ հայտարարեց, որ չկա ոչ մի Պարսկահայաստանի հարց, և եթե հայերից որևէ մեկը առաջադրի նման խնդիր, ապա ՀՅԴ-ն պատրաստ է պարսիկների հետ հալածելու նրան: Ինչ վերաբերում է Խորհրդային Միությանը, ապա թեև ՀՅԴ-ն սովետներից պահանջում է Հայաստանից ռուսական զորքերի հեռացումը, սակայն գիտակցում է, որ սեփական ուժերով անհնար է իրականացնել այն, այլ միայն համընդհանուր հեղափոխությամբ: Մինչև դրա իրականացումը իրենք Խորհրդային Միության դեմ ո՛չ Պարսկարստանի, ո՛չ էլ մեկ այլ երկրի տարածքում ոչ մի շարժում չեն սկսելու, ուստի Դաշնակցությունը Իրանի արտաքին քաղաքականությանը խոչընդոտ չէ: Նույնը նաև՝ ներքին քաղաքականության մեջ, քանի որ լինելով հակակոմունիստական կուսակցություն, ՀՅԴ-ն խոչընդոտում է Իրանում բոլշևիզմի տարածմանը: ՀՅԴ-ն կանգնած է Իրանի տարածքային ամբողջականության դիրքերի վրա երկու պատճառով. ա) որպեսզի Թուրքիան չկարողանա տարածվել դեպի արևելք և բ) որպեսզի քրդերը չկարողանան Քուրդիստան ստեղծել պարսկական հողերով այնպես, ինչպես որ Արարատով, Վանով և այլ տարածքներով, որոնց հայաթափման մեջ նրանք ունեին ամենակտիվ դերակատարությունը: Այդ իսկ պատճառով ՀՅԴ-ին ձեռնառու չէ ամբողջ քրդական զանգվածի «արթնացումը» և կուսակցության համար գոյություն չունի ո՛չ Պարսկաստանի և ո՛չ էլ Իրաքի քրդական հարց: Այս հարցում ևս ՀՅԴ-ի և Իրանի շահերը համընկնում են: Ռուբենը պարզաբանում էր, որ ՀՅ Դաշնակցությանը քրդերը հետաքրքրում են միայն Թուրքիայում, որովհետև նրանք պատնեջ են պանթուրանիզմի առջև, թուլացնում են Թուրքիային, և նրանց հաջողության դեպքում հայերը իրավունք կստանան բարձրացնելու Արևմտյան Հայաստանի խնդիրը, ու վերջին հաշվով քրդերից ավելի հեշտ է ստանալ հայկական հողերը, քան Թուրքիայից²⁸:

Միմյանց տեսակետները ձշտելուց հետո Թեյմուրթաշն ու Ռուբենը կազմեցին համատեղ գործողությունների ծրագիր, որը կսկսեր աշխատել միայն շահի կողմից հաստատվելուց հետո: Ծրագիրը կազմված էր 6 կե-

27 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 14:

28 Տե՛ս նույն տեղում, թ.14:

տից կամ հողվածներից: Ըստ **առաջին** կետի՝ դաշնակցականներն Իրանում մնալով հակակոմունիստական դիրքերում, չպետք է օգտագործեին Իրանի տարածքը Անդրկովկասում շարժումներ սկսելու համար: **Երկրորդ** հողվածով Իրանի քաղաքացիություն չունեցող հայերը կարող են անցնել Թուրքիայի արևելյան նահանգներ՝ քրդերի մեջ աշխատելու համար՝ պայմանով, որ նրանց աշխատանքը ուղղվի միայն թուրքերի դեմ: Նրանց հետ կապի և մատակարարման աշխատանքը կթույլատրվի, բայց խիստ գաղտնի ձևով: **Երրորդ** հողվածով իրանական իշխանությունները պաշտոնապես իբր՝ պետք է հետապնդեին և ձերբակալեին հայերին, բայց տեղերում հրամանատարական կազմը պետք է աջակցեր նրանց: Ըստ **չորրորդ** կետի՝ պարսկական կառավարությունը չէր տրամադրելու պարենամթերք, սակայն դրա փոխարեն սահմանի քրդերին թույլատրելու էր անարգել անցնել Իրան և պարենամթերք ձեռք բերել: **Հինգերորդ** կետով սահմանամերձ շրջանների գինվորական հրամանատարների աջակցությամբ Արարատ կուղարկվեին հայ գինվորներ: Եվ վերջապես՝ **վեցերորդ** կետով հետագա գործողությունների համար պետք է կազմվեր «...մի խառն մարմին՝ հայ-քիւրտ-պարսիկ գործերին ընթացք տալու համար»²⁹:

Այս ծրագրի վերաբերյալ թեև չկա շահի կողմից հաստատված պաշտոնական համաձայնություն (ինչը բնական է), սակայն ամենայն հավանականությամբ այն եղել է, քանի որ կարձ ժամանակ անց Իրան-ՀՅԴ համաձայնագիրը սկսեց գործել:

Իրանում Ռուբենը ծանոթանում է նաև տեղի դաշնակցականների տեսակետներին, որոնք լուրջ վերապահումներ ունեին ՀՅԴ-ի՝ քրդական շարժման հետ համագործակցության հարցում: Ռուբենը հասկանում էր, որ ամեն ինչ այդպես հարթ չի իրականանալու, ինչպես իր բանաձևում հրահանգավորել էր ՀՅԴ Ընդհանուր ժողովը: Նրա հետ համակարծիք էր նաև Իրանի դաշնակցականների մեծ մասը, որոնք շահագրգռված էին հայերի հետ իրանական կառավարության բարեկամության պահպանման մեջ և ծանոթ լինելով վերջինիս հակաքրդական քաղաքականությանը, հոռետեսությամբ էին նայում բանաձևի այն մասին, որը վերաբերում էր հայ-պարսկա-քրդական մերձեցմանն ընդդեմ թուրքերի: Նրանք կողմ էին միայն հայ-իրանական մերձեցմանը՝ առանց հույսերի, որ այդ բարեկամությունը կարող է օգտագործվել ընդդեմ պանթուրքիզմի և հօգուտ քրդական շարժման: Ուստի մատնանշելով 11-րդ Ընդհանուր ժողովի ընդունած բանաձևի թույլ կողմերը՝ նրանք Ռուբենին տալիս էին հետևյալ տրամաբանական հարցերը.

«1) Եթե Հոյբունը, հակառակ ՀՅԴ որոշմանը, չուզենա սահմանափակել իր գործունեությունը Թուրքիայի սահմաններում և միջոցների մեծ մասը չծախսի Թուրքիայում, ինչ պետք է անել,

2) Եթե քրդական շարժումներ սկսվեն Պարսկաստանում, ապա հայերը կհայտնվեն երկրնտրանքի առջև՝ քրդերի դեմ, պարսիկների հետ,

3) Եթե հակառակ այդ տեսության, պարսկական կառավարությունը թշնամաբար վերաբերվի քրդական շարժմանը և այդ հողի վրա մերձենա Թուրքիայի հետ, ապա հայտնվելով երկրնտրանքի առաջ՝ դադարեցնել

²⁹ Նույն տեղում, թ.15:

ամեն աշխատանք, կամ դասվել Պարսկաստանի թշնամիների դասին, ինչպիսիքն էլ կլինի ՀՅԴ-ի ընտրությունը»³⁰:

Սակայն Իրանից դուրս գտնվող դաշնակցականների մեծամասնությունը և Իրանի դաշնակցականների փոքրամասնությունը, այնուամենայնիվ, գտնում էին, որ առանց կորցնելու իրանական կառավարության բարեկամությունը, հնարավոր է շարունակել և հակաթուրքական գործունեությունը, և հայ-քրդական գործակցությունը Թուրքիայի մեջ՝ Պարսկաստանի վրայով:

Այսպիսով, ՀՅԴ 11-րդ Ընդհանուր ժողովի ընդունած որոշումը մնաց անփոփոխ: Ռուբենի վկայությամբ՝ ձեռքակալված Արտաշես Մուրադյանի փոխարեն շուտով Արարատ ուղարկեց **Վահանին**³¹ մի քանի մարտիկների հետ միասին: Իսկ իրանական կողմից Թեյմուրթաշի հանձնարարականները կատարում էր այդ շրջանի գլխավորական հրամանատար Զաֆար Դովլեն, որը հանդիսանում էր իրանական կառավարության և ՀՅԴ-ի ոչ պաշտոնական կապավորը և իրանական կողմի ներկայացուցիչը: Նրա սպաները Վահանին իր խմբով անցկացրին իրանա-թուրքական սահմանը: Վերականգնվեց մոտ մեկ տարի կտրված կապը Արարատի ապստամբների հետ, որոնք համալրվեցին ոչ միայն նոր, թարմ ուժերով, այլև առաջին անհրաժեշտության ապրանքներով: ՀՅԴ-ն Վահանի առջև դրել էր հետևյալ առաջադրանքները. 1) նա պետք է փոխարիներ Արտաշեսին և աշխատեր նշանակվել Արարատի հյուսիսում գործող ապստամբական ուժերի հրամանատար, 2) նրա գլխավոր խնդիրը պետք է լիներ Ա. Մուրադյանի ձեռքակալությունից հետո թուրքական իշխանությունների ակտիվ գործունեության հետևանքով իրար հետ թշնամացած քրդական ցեղերին վերամիավորելը, քանի որ Իհսան Նուրիին ոչ մի կերպ չէր հաջողվում իրականացնել այդ առաջադրանքը, 3) ոչ մի կերպ չթողնել, որ թուրքերը պարսկական քրդերի շրջանում հուզումներ առաջացնեին ընդդեմ իրանական իշխանությունների, այլ ընդհակառակը՝ նրանց ամուր կապել Արարատի հետ և ապահովել ապստամբների թիկունքը, 4) քանի որ Իրանը թույլ չի տալիս մեծ թվով հայ մարտիկներ տեղափոխել իր տարածքից դեպի Արարատ, Վահանը պետք է նրանց տեղափոխի Խորհրդային Հայաստանից՝ տեղի ծպտված դաշնակցականներից և փախստականներից, որոնք կցանկանային նորից լինել Երկրում, 5) նշված ծրագիրն իրագործելու նպատակով նա պետք է համոզեր Արարատի ապստամբության հրամանատարությանը, որպեսզի վերջինս չսահմանափակվեր միայն Արարատից հարավ ընկած տարածքները թուրքական զորքերից մաքրելով, այլ նմանատիպ գործողություններ վարեր նաև Արարատի հյուսիսային լանջերից մինչև խորհրդա-թուրքական պետական սահմանն ընկած տարածքներում, որպեսզի հայ կամավորները կարողանան անարգել հասնել Արարատ, 6) լիազորել կամ Արարատի քրդերից մեկին, կամ Ռուբենին (Տեր-Մինասյանին) արտասահմանում խոսել Արարատի կառավարության կողմից³²:

30 Նույն տեղում, թ. 3:

31 Ամենայն հավանականությամբ խոսքը Վահան Փափազյանի (Կոմսի) մասին է:

32 Տես նույն տեղում:

Բացի այդ, Ռուբենը և Թեյմուրթաշը մշակեցին համատեղ ռազմական գործողությունների ծրագիր, ըստ որի՝ քանի որ Արարատը միայնակ չի կարողանա երկար դիմանալ անընդհատ համալրումներ ստացող թուրքական բանակին, այս անհրաժեշտ է որպեսզի ապստամբական ուժերը ընդարձակեն ապստամբության տարածքը, ինչն իրականացնելու համար Վահանը պետք է ստանար Արարատի հյուսիսային ճակատի հրամանատարի պաշտոնը և իր տրամադրության տակ՝ Գիալբաբանի, Բոյշրբի, Գիլոյի, Խըղըր աղա Շամկանի, Ալո Միհոյի ցեղերը՝ ընդհանուր 2300 վրանով, որոնց անհրաժեշտ էր թշնամացնել Արալըխների մեջ բնակվող թաթարների (ազերի) հետ և Դաշբուլունից մինչև Շահթալա ընկած տարածքում բնակվող թուրք-թաթարական ազգաբնակչությանը հեռացնել կամ բնաջնջել՝ Արարատի ապստամբների համար ձեռքերի ազատություն ապահովելով մինչև Արաքս: Այդ ամենից հետո նրա ուժերը պետք է գրավեին Մարգարա-Իգդիր գիծը, ամրանային Օրկովի, Չինգիլ-Սինակ լեռնանցքներում և Սուրմալուն ու Կողբը մաքրեին թաթարներից, որտեղից Վահանը պետք է կապվեր Արագածի փեշերին ծվարած սասունցի և մշեցի փախստականների հետ և նրանցից կամավորական ջոկատներ հավաքելով՝ ուղարկեր Արարատ:

Արարատից հարավ ընկած ուղղության համար որոշվեց հետևյալը. այնտեղ բնակվող վեց ցեղերից կազմավորել պաշտպանական ճակատ ձախձներից մինչև Արծափ, իսկ Վահանն այդ ժամանակ պետք է կտրեր Իգդիր-Բայազետ ճանապարհը: Նույն այդ ժամանակ Արարատից արևելք բնակվող Իրանի ութ քրդական ցեղերը թեև ընդհանուր ճակատ չունեին, բայց միանալով պետք է պաշտպանեին Իհսանի և Վահանի թիկունքը՝ չթողնելով այնտեղ թուրքական զորքերի հայտնվելը, իսկ մյուս ուժերը պետք է կտրեին Բայազետի ճանապարհը Վանից և Արձեշից³³:

Մարտական գործողությունների այս ծրագիրը փոքր փոփոխություններով ընդունվեց Արարատի կառավարության կողմից, որը կայացրեց հետևյալ գործնական որոշումները. 1) զորքերի ընդհանուր հրամանատարը շարունակում է մնալ Իհսան Նուրին, 2) հյուսիսային ռազմաճակատի հրամանատար է նշանակվում Վահանը, 3) բուն Արարատի պաշտպանությունը վստահվում է Բոյշին (Իբրահիմ Հըսգեին), 4) Արարատից հարավ ծավալվող հարձակողական գործողությունները ղեկավարում են Քոռ Հուսեյն փաշայի որդին և **Կարոն**³⁴:

Այս ամբողջ գործողությունների մեջ շատ մեծ էր մեկ այլ դաշնակցական, մասնագիտությամբ բժիշկ **Մանուկի** դերակատարությունը, որը, լինելով Զաֆար Դովլեին շատ մտերիմ անձնավորություն, դարձել էր հուսալի կամուրջ Իրանի տեղական իշխանությունների և քրդերի միջև: Զաֆար Դովլեն Մանուկին նշանակում է սահմանային շրջանի զինվորական բժիշկ: Նրան հաջողվում է իր շուրջը հավաքել պարսիկ սպաների, որոնք գաղտնի օգնում էին քրդերին: Սակայն շուտով, երբ այդ փաստը հայտնի դարձավ թուրքերին, իրանական իշխանությունները ստիպված էին հեռացնել նրանց իրենց պաշտոններից: Այնուամենայնիվ, գաղտնի

33 Տե՛ս, նույն տեղում, թ. 17:

34 Ամենայն հավանականությամբ՝ **Կարո Սասունի**:

օգնությունը քրդերին թե՛ հայերի և թե՛ պարսիկների կողմից շարունակվում էր, ինչը ոգևորություն առաջ բերեց Արարատի ապստամբների շրջանում:

Եթե Արարատի և նրա շուրջը եղած քրդական ցեղերին պետք է աշխատեր միավորել Վահանը, ապա պարսկական քրդերին՝ Մանուկը³⁵: Այդպիսով նա պետք է զերծ պահեր նրանց թուրքական ազդեցությունից և կապելով Արարատի ապստամբների հետ՝ ապահովեր վերջիններիս թիկունքը: Նրան այդ հարցում օգնում էր Կարոն, որը ժամանակ առ ժամանակ անցնում էր Իրան և Մանուկի հետ քննարկում հետագա անելիքները: Մանուկը համաձայնության եկավ տեղի ցեղերի առաջնորդների հետ այն մասին, որ Արարատի ապստամբների կողմից Ալադաղում և Բայազետում մարտեր մղելու ժամանակ նրանք պետք է օգնական ուժեր ուղարկեն, ինչպես նաև հաց փոխադրեն և վաճառեն այն փոխարժեքով, որն ինքը պետք է որոշի³⁶:

Այս իրադարձությունները տեղի ունեցան **1930 թ. մայիս-հունիս** ամիսներին, և այդ կարճ ժամանակահատվածում Մանուկին հաջողվեց կարգավորել այնպիսի խնդիրներ, որոնք անկարող էին լուծել Իրանի և Արարատի կառավարությունները շատ երկար ժամանակ: Նրա շնորհիվ իրանական կողմը, որն այդ շրջանում ուներ զորքերի շատ թույլ խմբավորում, որպես դաշնակից ձեռք բերեց մի քանի ռազմատենչ ցեղեր՝ 3100 վրանով և ամուր փակեց թուրք-իրանական սահմանը թուրքական զորքերի հավանական ներխուժումից: Այս փաստը կարևոր էր նաև մեկ այլ պատճառով. Արարատի քրդերն իրենց թիկունքում տեսնում էին իրենց ցեղակիցների ջոկատները, այլ ոչ թե պարսիկների ստորաբաժանումները, որոնց նրանք նույնպես չէին հավատում: Այս գործողությունների շնորհիվ Արարատն արևելքից անվտանգ էր 1930 թ. մայիսից մինչև հունիսի 15-ը: Ուստի մինչև 1930 թվականի հուլիս ամիսը Արարատի ապստամբներին հաջողվեց մի քանի անգամ պարտության մատնել թուրքական զորքերին:

Թուրքական իշխանությունների համար պարզ էր, որ առանց թուրք-իրանական սահմանն ամուր փակելու շատ դժվար և նույնիսկ անհնար է լինելու հաղթել քրդերին: Դա կարելի էր երկու ճանապարհով. կամ իրանական զորքերն իրենք պետք է ամուր փակեին սահմանը, կամ էլ թողնեին, որպեսզի դա իրականացնեն թուրքական զորքերը: **Սակայն** շահական կառավարությունը չուներ անհրաժեշտ քանակությամբ ուժեր իրավիճակը երկար ժամանակ վերահսկելու համար, և **երկրորդ**՝ այդպիսի քայլ կատարելը կնշանակեր բախում իր երկրի քրդերի հետ, որից անպայման կօգտվեր Թուրքիան՝ ցանկանալով շեղել քրդերի ուշադրությունը Արարատից և նրանց ուղղել Իրանի դեմ: Բացի այդ՝ շահը դեմ չէր օգտվել թուրքերի ծանր կացությունից: Այդ իսկ պատճառով զարմանալի չէր, որ իրանական կողմը, ամեն պատրվակ օգտագործելով, չէր փակում սահմանը: Իսկ թուրքական զորքերի իրանական տարածք անցնելու և այդտեղ քրդերի դեմ պատերազմական գործողություններ սկսելու մասին խոսք անգամ լինել չէր կարող:

35 Մասնագիտությամբ բժիշկ Մանուկը Իրանի դաշնակցական շրջանակներում հայտնի **դոկտոր Մանուկն** է (Մանուկ Վարդանյան): Ծագումով գյումրեցի էր, ով հետագայում երկար տարիներ բնակվել է Շիրազ քաղաքում:

36 Նույն տեղում, թ. 19:

Այս ամենը սրեց թուրք-իրանական հարաբերությունները, սակայն առանց դաշնակցի Թուրքիան չէր համարձակվում Իրանի հետ գնալ բացահայտ առճակատման՝ վախենալով Մեծ Բրիտանիայի միջամտությունից: Գործն ավարտվում էր բողոքի նոտաներով, որոնք անպատասխան չէին մնում իրանական կողմից:

Սակայն շուտով քրդերի և դաշնակցականների հաջողություններն Արարատում խոր անհանգստություն առաջ բերին խորհրդային ղեկավարության մոտ և ստիպեցին հանդես գալ թուրքերի կողմում, ինչը միանգամից փոխեց տարածաշրջանային ուժերի հավասարակշռությունը:

Մինչ այդ՝ 1930 թ. հունիսի 19-ին Մանուկն իր մոտ է հրավիրում հայ-դարան ցեղի առաջնորդներից Յուսուֆ-Աբդալին և տալով նրան 100 դոլար՝ հանձնարարում է թուրքերի դեմ ոտքի հանել ողջ հայդարանը, ինչպես նաև Սարայի և Աբաղայի շրջակայքի ցեղերին: Համոզիչ երևալու համար Մանուկը Յուսուֆ-Աբդալին հայտնում է, որ իր դրամը նաև Ջաֆար Դովլեի դրամն է, և իր շուրթերով խոսում են ոչ միայն հայերը, այլև պարսիկները: Սակայն այս քայլը տվեց բոլորովին հակառակ արդյունքը, որը խիստ բացասական ազդեցություն ունեցավ քրդական ապստամբության վրա: Յուսուֆ-Աբդալը Մանուկի հայտնած լուրը հասկանում է յուրովի. նա, ցանկանալով իր ազդեցությունը տարածել այլ ցեղերի վրա, նրանց առաջնորդներին է ուղարկում նամակներ, որտեղ գրում է, թե ինքը շարժվում է Ջաֆար Դովլեի հրահանգով, որը նույնպես անկախ Թուրքիստանի կողմնակից է, և ով չենթարկվի նրա՝ դեպի Թուրքիա արշավելու հրամանին, պետք է ոչնչացվի: Նամակատարներից մեկն ընկնում է թուրքերի ձեռքը, և որպեսզի հարթեն այս միջադեպը, պարսիկները ձերբակալում են Յուսուֆ-Աբդալին և բանտում թունավորում³⁷:

Սակայն ակնհայտ էր, որ թուրքերն իրենց ձեռքից բաց չէին թողնելու այս անակնկալ հաջողությունը և չէին բավարարվելու Յուսուֆ-Աբդալի մահվամբ: Նրանք մեղադրեցին իրանական զորքերի ղեկավարությանը Թուրքիայի դեմ թշնամական գործողություններ կատարելու մեջ և պահանջեցին որպես փոխհատուցում փոխել տեղի հրամանատարական կազմը և թույլ տալ թուրքական զորքերին՝ մտնելու Իրան և դուրս գալու Արարատի ապստամբների թիկունքը: Իրանական կողմը ստիպված էր զիջել, ուստի փոխեց այդ շրջանի հրամանատարական կազմը, այդ թվում՝ Ջաֆար Դովլեին և Մանուկին, սակայն թուրքական զորքերի՝ իրանական հողեր մուտքին շարունակում էր ընդդիմանալ:

Յուսուֆ-Աբդալի անխոհեմ քայլը սկզբնական ժամանակաշրջանում տվեց նաև իր դրական արդյունքները. շատ ցեղապետեր, հավատալով նրան, հարձակվեցին թուրքերի վրա: Օսման բեյը մոտ 120 հոգով անցավ սահմանը և մինչև Սարայ ընկած տարածքը մաքրեց թուրքերից: Իսկ մագրկիցի Շարաֆ բեյի որդի Օսման-Հասոն գրավեց ս. Բարդուղիմեոսի վանքը՝ կոտորելով տեղի պահակագործը:

Իսկ ահա Կարոն՝ Իբրահիմի հետ միասին, թուրքերին քշեց Աբաղայից

37 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց.1, գ.64, թ. 21:

մինչև Բերկրի՝ կտրելով Վան-Բերկրի ճանապարհը³⁸: 1930 թ. հունիս ամսին քրդական ուժերը հաջող հարձակողական գործողություններ իրականացրին Արարատի հարավային և հյուսիսային ռազմաձևակառուցում: Զարգացնելով իրենց հաջողությունները հարավային ռազմաձևակառուցում՝ Կարոն, Քոռ Հուսեյն փաշայի որդիները և այլ ցեղապետեր Աբաղայի, Բերկրիի, Զիլանի և Մանազկերտի ուժերի հետ համատեղ պարտության մատնեցին թուրքերին և գրավեցին Արձեշն ու Զիլանը, որից ոգևորված՝ Վանի քրդերն էլ գրավեցին Վանը, որը, սակայն, չկարողացան երկար պահել: Հաքյարիի ապստամբներն էլ գրավեցին Զուլամերիկը՝ կոտորելով տեղի թուրքական կայազորը³⁹:

Փաստորեն 1930 թ. հուլիս ամսին թուրքական զորքերը նահանջել էին Արարատից մինչև Հաքյարի, և իշխանությունը գտնվում էր քրդերի ձեռքին: Իրանի քրդերի հետ միասին այդ ժամանակ իրենց ազգակիցներին օգնության են գալիս նաև Իրաքի և Սիրիայի քրդերը: Վերը հիշատակված Օսման աղան ուրիշ ցեղապետերի հետ միասին համաձայնագիր է կնքում իրաքյան Քուրդիստանի ամենահայտնի շեյխերից մեկի՝ Ահմեդ Բարզանիի հետ: Այս միացյալ ուժերը գրավում են Օրամարը, որի ժամանակ, բացի զինվորականներից, զոհվում են նաև բազմաթիվ թուրք ոստիկաններ և քաղաքացիական ծառայողներ, իսկ Բաշկալեում նրանց հաջողվում է գերել և մահապատժի ենթարկել տեղի կայնականին⁴⁰: Զուլամերիկը գրավելու ժամանակ ապստամբներին Իրաքից օգնության եկավ շեյխ Հասանը՝ 500 հեծյալներով, ինչն էլ կանխորոշեց թուրքերի պարտությունը:

1930 թ. օգոստոսին մի քանի անգամ Սիրիայից Թուրքիա է ներխուժում Օսման աղա զադե Հաջոն, իսկ Հոյբունի փաստացի ղեկավարներ Բադրխան եղբայրները Սիրիայում կազմավորում են 200 հոգուց բաղկացած մի հեծյալ ջոկատ, որը նույնպես պետք է օգնության հասներ Արարատի ապստամբներին⁴¹:

Հյուսիսային ռազմաձևակառուցում Վահանի ուժերը Դաշբուրունի մոտ տեղի ունեցած կատաղի մարտերից հետո 1930 թ. հունիսի վերջին գրավում են Արաքսի ավի-Արալխներ, Դաշբուրուն-Ջորա Քյաթուկ գիծը և ասպատակում Իգդիրի դաշտավայրը մինչև Կաղզվան⁴²: Թուրքական զորամասերը, չկարողանալով դիմադրել քրդական ճնշմանը, անցնում են խորհրդա-թուրքական սահմանը և ապաստան գտնում Խորհրդային Հայաստանում:

Սուրմալուի ձակատում Վահանը փորձում է միավորել տեղի քրդական ցեղերին, սակայն դիմադրության է հանդիպում ղզըբաշ օլլու ցեղի կողմից, որը պահանջում է նախքան ապստամբությանն իր միանալը ռազմաձևակառուցումները 200-300 հայ մարտիկների Խորհրդային Հայաստանից: Վահանը խոստանում է կատարել այդ պահանջը, սակայն պայմանով, որ մինչև այդ մարտիկների տեղ հասնելը նրանք դուրս մղեն Արարատից մինչև

38 Տե՛ս նույն տեղում:

39 Տե՛ս **Կարո Մասունի**, Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները, Պէյրուք, 1968, էջ 287:

40 Տե՛ս **Лазарев М. С.**, նշվ. աշխ., էջ 153:

41 Տե՛ս նույն տեղում, էջ 152:

42 Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1930, N 8, էջ 189:

խորհրդային սահման ընկած տարածքում եղած թուրքական զորքերը և թուրք-թաթարական (ազերիական) բնակչությունը դեպի Խորհրդային Հայաստան⁴³:

Թեև քրդերը խոստացան իրականացնել այդ խնդիրը, սակայն չկարողացան, քանզի առաջին ռազմական հաջողություններից հետո նրանք տարվեցին թալանով, և միայն մի փոքրաթիվ ջոկատ հավատարիմ մնաց Վահանին (որին քրդերն անվանում էին **Վելի**): Այդ իսկ պատճառով նա կարողացավ իրագործել Թեյմուրթաշի և Ռուբենի համաձայնեցրած ծրագրի միայն առաջին երկու կետերը, իսկ երրորդ և չորրորդ կետերը՝ բացել Սինակի լեռնանցքը և Սուրմալուով օգնություն ստանալ Հայաստանից, մնացին անկատար: Վահանի ուղարկած զինյալ ջոկատները հասնում էին մինչև Կողբ, սակայն սովոր չլինելով դիրքային, խրամատային մարտաձևին, իրենց թալանած ավարով վերադառնում էին Արարատ:

Նույնը տեղի ունեցավ և Դաշբուրունի ճակատամարտից հետո, երբ քրդերը գրավեցին Իգդիրը, և թուրքական զորքերը ստիպված էին փախչել Խորհրդային Հայաստան. այնտեղ ամրանալու փոխարեն քրդերը թալանեցին քաղաքը և վերադարձան Արարատ: Անհաջողությամբ են ավարտվում նաև Վահանի՝ Հայաստանից կամավորներ բերելու փորձերը: Նա մի քանի քրդական խմբեր է ուղարկում Խորհրդային Հայաստանի տարբեր մասեր՝ կամավորներ հավաքագրելու և Արարատ անցկացնելու համար: Սակայն խմբերից մեկը, խույս տալով ռուս սահմանապահներից, հասնում է Դավալու և չկողմնորոշվելով, թե ո՞վ է կամավորական և ո՞վ՝ բոլշևիկ, մարտի է բռնվում տեղացիների հետ և փանփուշտները սպառվելուն պես մյուս խմբի հետ վերադառնում Արարատ լեռան վրա⁴⁴: Իսկ ահա մյուս խումբը անցնում է սահմանը Սարդարապատի մոտ, որպեսզի հասնի Արագած՝ սասունցիներից ջոկատներ կազմավորելու համար, սակայն նկատվում է խորհրդային զորքերի կողմից և առանց հասնելու Թալին՝ ստիպված է լինում Անիի մոտ անցնել Ախուրյան գետը՝ իր հետ տանելով թալանը և ճանապարհին հանդիպած հայ գյուղացիներին⁴⁵:

Այս իրադարձություններն էին, որ դրդեցին Խորհրդային Միության ղեկավարությանը միանալ քենալականներին և ճնշում գործադրել իրանական իշխանությունների վրա՝ օր առաջ ապստամբությունը պարտության մատնելու նպատակով, քանի որ **բոլշևիկները քրդերի արշավները համարում էին դաշնակցականների հետախուզական մարտեր, որոնց հետևելու էին ավելի լուրջ գործողություններ**: Նրանց համար դրությունն ավելի էր բարդանում այն պատճառով, որ կոլեկտիվացման քաղաքականության հետևանքով Անդրկովկասում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում առաջացել էր հակակոմունիստական մեծ շարժում, որը շատ վայրերում վեր էր ածվել բացահայտ ապստամբությունների, երբ ամբողջ գյուղեր մարտի էին բռնվում ՆԳԺԿ-ի և կոմունիստներից ու կոմերիտականներից հավաքագրված ստորաբաժանումների հետ:

Մոսկվան համոզված էր, որ դաշնակցականներն օգնության են շտա-

43 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 21:

44 Տե՛ս նույն տեղում, թ. 22:

45 Տե՛ս նույն տեղում, թ.23:

պում ապստամբներին, և եթե ձեռք չառնվեն կտրուկ միջոցներ, ապա իրավիճակն ամեն վայրկյան կարող է հսկողությունից դուրս գալ, առավել ևս, որ Հայաստանում սկսեցին համառ լուրեր շրջել, թե իբր **Դրոն գալիս է՝ հայերին և քրդերին միավորելու համար**: Արևմտահայ փախստականները, որոնք ավելի շատ էին հավատացել այդ լուրերին, նույնիսկ մարդիկ ուղարկեցին դեպի Արարատ, սակայն արդեն ուշ էր. ռուս բոլշևիկները և նրանց օգնությամբ՝ քեմալականները երկու կողմից ամուր փակել էին սահմանը:

Խորհրդային իշխանությունների թույլտվությամբ թուրքական զորքերը Կարսից երկաթուղով բերվեցին Լենինական, ապա՝ Մարդարապատ ու Արտաշատ և այդ վայրերից անցնելով սահմանը՝ փակեցին այն: Մակայն չբավարարվելով այդքանով՝ խորհրդային հրամանատարությունը որոշում է կայացնում ռուսական զորքեր ուղարկել՝ Արարատի ապստամբների դեմ կռվելու համար: Ընդ որում՝ հայկական կարմիր բանակի զորամասերը ուղարկվում են Իջևան և Ղազախ, քանի որ մտավախություն կար, որ միայն Դրոյի մասնակցությունը Արարատի ապստամբությանը բավարար էր, որպեսզի նրանք անցնեին դաշնակցականների կողմը⁴⁶: Ըստ բոլշևիկների՝ հայ-քրդական դաշինքը ծրագրված էր Մեծ Բրիտանիայի կողմից և նպատակ ուներ խորհրդային Կովկասի սահմանին մոտ ստեղծել հենարան՝ այնտեղ ապստամբություններ առաջացնելու և զավթելու նպատակով:

1930 թ. հուլիս-օգոստոս ամիսներին մարտերն Արարատում ընթանում էին փոփոխակի հաջողությամբ: Թուրքական զորքերին ոչ մի կերպ չէր հաջողվում առավելության հասնել քրդերի նկատմամբ: Փոքր Մասիսի իրանական մասից ՀՅԴ-ն և քրդական ցեղերը շարունակում էին օգնել Արարատի ապստամբներին: 1930 թ. օգոստոսի 7-11-ին Բայազետի ձախիճներում ապստամբներին հաջողվում է չափազանց ծանր պարտության մատնել թուրքական պատժիչ զորքերին՝ Սալիի փաշայի հրամանատարությամբ: Զարգացնելով հաջողությունը՝ նրանք գրավում են մեծ տարածքներ և դուրս գալիս խորհրդա-թուրքական սահման: Ակնհայտ էր, որ առանց Արարատի շրջապատման թուրքական զորքերը շարունակելու էին կրել պարտություն պարտության հետևից: Մակայն թուրքական իշխանություններին ոչ մի կերպ չէր հաջողվում համոզել Ռեզա շահին՝ զիջել Թուրքիային Փոքր Մասիսի արևելյան հատվածը:

5. ԽՍՀՄ-ի ռազմաքաղաքական շանտաժը և Իրանի դիրքորոշման փոփոխությունը

Խորհրդային ղեկավարությունը շահին ստիպելու նպատակով 1930 թ. օգոստոսի վերջին զորքեր է մտցնում Իրան՝ Արդաբիլի և Մաշհադի ուղղություններով⁴⁷: Ռեզա շահը հարկադրված էր տեղի տալ: Թուրքական զորքերը օգոստոսի վերջին անցնում են թուրք-իրանական սահմանը և

46 Տե՛ս «Դրօշակ», 1930, N 8, էջ 218:

47 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 27:

շրջապատում Արարատի ապստամբներին: Իրենց բաժինն են ստանում նաև բոլշևիկները. Իրանում գտնվող սպիտակգվարդիականները հանձնվում են նրանց և անմիջապես գնդակահարվում: **Սակայն շահը չի հանձնում դաշնակցականներին, որոնց ընդամենը՝ ժամանակավորապես արքորում է երկրի հարավային շրջաններ:**

Արարատի քրդերը Իհսան Նուրիի և Բրոյի ղեկավարությամբ դեռևս չգիտեին ռուս-պարսկա-թուրքական գաղտնի գործարքի մասին և ոգևորված օգոստոսի առաջին կեսի խոշոր հաջողություններով՝ շարունակում էին փոքր խմբեր ուղարկել դեպի հյուսիս ու արևմուտք՝ մինչև Կարս և Էրզրում⁴⁸: Թավրիզի դաշնակցական մարմնին հաջողվում է իր անդամներից **Դավթին**⁴⁹ և **Մխտյին**⁵⁰ ուղարկել Արարատ՝ հայտնելու ապստամբներին, որ արդեն պետք է զգուշանալ պարսիկներից և Իրանից չպետք է սպասել որևէ օգնության, այլ միայն Խորհրդային Հայաստանից, որտեղից դաշնակցականները պետք է խումբ կազմավորեին և ուղարկեին Արարատ:

Զգալով վերահաս վտանգը՝ ՀՅԴ-ն աշխատում էր ամեն կերպ օգնություն հասցնել Արարատ, սակայն գնված ռազմամթերքն ու սնունդն ուղարկել չհաջողվեց, քանի որ իրանական քրդերը հրաժարվում էին անցնել սահմանը: Մնում էր միայն օգնությունը Հայաստանից: Վահանի ուղարկած մարդիկ 1930 թ. սեպտեմբերի սկզբին վերադառնում են այնտեղից՝ իրենց հետ բերելով մոտ 170 մարդ: Այս փախստականները Արարատի ապստամբներին թշնամի քրդական ցեղերի կողմից չթալանվեցին և չսպանվեցին, այլ նրանց նույնիսկ ճանապարհ տվեցին հասնելու Իհսան Նուրիի և Վահանի մոտ⁵¹: Սակայն այդ խումբը ապստամբության ղեկավարության մոտ հիասթափություն առաջացրեց, քանի որ նախ՝ նրա միայն մի փոքր հատվածն էր զինված, և մեծ մասը եկել էր ոչ թե կռվելու թուրքերի դեմ, այլ բոլշևիկներից գլուխներն ազատելու նպատակով, և երկրորդ՝ նրանք որպես գաղտնիք Վահանին հայտնում են, որ խմբի շատ անդամներ ուղարկվել են ՕԳՊՈՒ-ի կողմից և նպատակ ունեն ներսից քայքայել ապստամբությունը: Այդ իսկ պատճառով Վահանը զինաթափում է խումբը և ուղարկում Իրան, որտեղ նրանք ձերբակալվում են իրանական զորքերի կողմից և արքորվում հարավային նահանգներ:

1930 թ. սեպտեմբերի սկզբներին սկսվում է թուրքական զորքերի ընդհանուր հարձակումը, որը տևում է մոտ մեկ ամիս: Ապստամբների գլխավոր ուժերը պարտվում են, որոշ ցեղեր անցնում են թուրքերի կողմը: Տեսնելով օրհասական վտանգը՝ Վահանը գնում է Խորհրդային Հայաստան՝ անձամբ հավաքագրելու կամավորների ջոկատ, սակայն իր գնալու հաջորդ օրը Իսհան Նուրին անցնում է Իրան՝ անիմաստ դարձնելով նրա ճամփորդությունը: Իսկ երբ Վահանը, բանից անտեղյակ, վերադառնում է Արարատ՝ մեկ տասնյակ սասունցիներով, ապստամբությունն արդեն ճնշված էր: Զգտնելով Բրոյին՝ նա անցնում է Իրան և հանձնվում իշխանություններին. նրան բանտարկում են, սակայն կարճ ժամանակ անց

48 Տե՛ս նույն տեղում, թ. 30:

49 Ամենայն հավանականությամբ **Դավիթ Փափազյանն** է (1884 թ. Վան – 1961 թ. Թեհրան):

50 Ամենայն հավանականությամբ **Գրիգոր Մխիթարյանն** է (1899 թ. Երևան–1960 թ. Թեհրան):

51 Տե՛ս նույն տեղում:

ազատ են արձակում⁵²:

Քրդերի կորուստներն ահռելի էին: Միտավոր հաշվարկներով, տարբեր աղբյուրների համաձայն, միայն սպանվածների թիվը տատանվում էր 9–15 հազարի սահմաններում, որոնց գերակշիռ մասը խաղաղ բնակիչներ էին: Հարյուրավոր գյուղեր ոչնչացվել էին ամբողջովին: Արձեշում հրկիզվել էր մոտ 200 գյուղ, Արարատի շրջակայքում՝ 600, Պատնոցում ոչ մի գյուղ չէր մնացել⁵³: Ապստամբության պարտությունը լարված հարաբերություններ առաջ բերեց հայերի և քրդերի միջև: Քրդերի մի մասը մեղադրում էր ՀՅԴ-ին՝ իրենց արկածախնդիր գործողությունների մեջ ներքաշելու համար, որի պատճառով ունեցան սոսկալի կորուստներ և ավերածություններ: Հարկավոր էր հնարավորինս արագ կանխել հարաբերությունների հետագա լարումը, որը կրկին կարող էր վերաճել թշնամության՝ այդտեղից բխող ծանր հետևանքներով:

Առաջին քայլը, որ կատարեց ՀՅ Դաշնակցությունը, քուրդ արքայազան ընտանիքներին, հատկապես ղեկավարներին նյութական օժանդակություն ցուցաբերելն էր: Այդ քայլը մեղմեց քրդերի դժգոհությունը, ինչից օգտվելով՝ ՀՅԴ գործիչներին հաջողվեց նրանց համոզել (կամ էլ՝ քրդերը ցանկացան ընդունել այդ վարկածը), որ Արարատի ապստամբների պարտության գլխավոր պատճառը հանդիսանում է ոչ թե ՀՅ Դաշնակցության գործունեությունը, այլ շահի կառավարության դավաճանությունը և բոլշևիկների թշնամական վերաբերմունքը:

Դեռևս 1930 թ. օգոստոսի վերջին, երբ արդեն պարզ էր, որ Արարատի պարտությունը գրեթե անխուսափելի է, ՀՅԴ-ն որոշում է Իրանում անցկացնել խորհրդակցություններ՝ Արարատից հետո հետագա անելիքները որոշելու նպատակով: Այդ խորհրդակցությունները տևեցին ողջ սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսները, որոնցում հաշվի էին առնվում նաև բանտերում և արքայազայրերում գտնվող Ի. Նուրիի, շեյխ Աբդալի և այլ ազդեցիկ առաջնորդների կարծիքները: Ի վերջո, 1931 թ. սկզբին ընդունվեց մի ծրագիր, ըստ որի Արարատի հետ կապը չպետք է կտրվեր, անհրաժեշտ էր օգնել ապստամբների ընտանիքներին, ինչպես նաև աշխատել, որպեսզի արքայազանները վերադառնան իրենց բնակավայրերը, իսկ երբ Արարատում վերստեղծվի ապստամբական ամուր կորիզ, հատկացնել նրան 3000 դոլար բյուջե: Անհրաժեշտ էր նաև կազմակերպել Ուրմիայի քրդերին, դեպի Վասպուրական ուղարկել քարոզիչներ և պարտիզանական խմբեր, նույն ծրագիրն իրագործել նաև Հաքյարիի և Իրաքի քրդերի շրջանում: Եվ վերջապես՝ Արարատի շրջանի լիազոր կազմակերպիչ նշանակել **Սուրենին**⁵⁴, իսկ Հաքյարիի և Վասպուրականի շրջաններում՝ **Սաֆրազին**, յուրաքանչյուրին հատկացնելով 3000 դոլար բյուջե⁵⁵:

ՀՅ Դաշնակցության ղեկավարները ոչ առանց հիմքի գտնում էին, որ թեև քրդերի կորուստները մեծ էին, սակայն նրանց գլխավոր ուժերը ոչ թե ջախջախվել, այլ ցրվել էին թուրքական գորբերի կողմից,

52 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 31:

53 Տե՛ս **Аванесов С. С.** Положение национальных меньшинств в Турции. Ереван, 1963, с. 59.

54 **Սուրենի** և **Սաֆրազի** ով լինելը հնարավոր չեղավ պարզել:

55 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 33:

և եթե տարվեն համապատասխան աշխատանքներ, ապա 1931 թ. գարնանը Քուրդիստանի և Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում նորից կառաջանան հուժկու ապստամբություններ:

Իրագործելու համար իր առջև դրված առաջադրանքները, Սաֆրազը իր մոտ հրավիրեց Մոկքի առաջնորդներին, որոնք տարագրվել էին Իրան, և նրանց միջոցով կարողացավ շատ կարճ ժամանակահատվածում կազմակերպել ու ելույթների մղել Վասպուրականի քրդերին: Սակայն թուրքական իշխանությունները ուշադիր հսկում էին քրդերին և նրանց առաջին հաջողությունից հետո շատ արագ կասեցնում են շարժման ծավալումը: Այնուամենայնիվ Սաֆրազին, որն այդ ժամանակ գտնվում էր թուրքիրանական սահմանին, հաջողվում է դեպի Իրան փախած քրդերից նորից խումբ հավաքել և երկու դաշնակցականների հետ ուղարկել Վասպուրական չորս նպատակով՝ ա) շրջել Վասպուրականով և նորից կազմակերպել տեղի քրդական ցեղերին, բ) գտնել փախստականներից վստահելի տարրեր և Վասպուրականի գավառներում ստեղծել հուսալի հենարան, գ) այս հենարանի կորիզները կապել իրար հետ, իսկ հետագայում՝ Իրանի և Իրաքի քրդերի հետ և դ) ուղիներ որոնել սննդամթերի հայթայթման համար⁵⁶: Այս խմբին հաջողվում է կատարել իր վրա դրված պարտականությունները և շրջելով Վասպուրականի մի շարք գավառներով՝ ստեղծում է կորիզներ, նրանց կապում է իրար հետ: Վերադառնալով Իրան՝ նրանք ներկայացնում են Վանի և նրան հարևան վիլայեթներում տիրող իրավիճակը, ինչը թույլ է տալիս ՀՅ Դաշնակցության ղեկավարությանը եզրակացնելու, որ քայքայման ու կործանման եզրին կանգնած քուրդ ազգաբնակչությունը ատելությամբ է լցված դեպի թուրքերը և համակրանքով՝ դեպի հայերը, ուստի անհրաժեշտ քանակի կազմակերպիչների, զենքի, դրամի առկայության դեպքում նրանց կարելի է շատ արագ հանախմբել և ուղղել թուրքերի դեմ: Նրանք չէին սխալվում՝ ենթադրելով, որ 1931 թ. գարնանը կծագեն նոր ապստամբություններ:

Եվ իսկապես, 1931 թ. գարնանը, չնայած այն հանգամանքին, որ թուրքական իշխանությունները Արարատը հայտարարել էին փակ գոտի և բացի զինվորականներից այնտեղ ոչ ոք իրավունք չունեի գտնվելու, քրդական ցեղերը նորից ապստամբություն բարձրացրին: Հատկապես ակտիվ էին Պատնոցի ցեղերը: Ճիշտ է, այդ ապստամբությունը չունեի այն թափը, որ կար 1930-ին, սակայն ստիպեց թուրքական հրամանատարությանը զգալի քանակի ուժեր ներգրավել այն ճնշելու համար:

Ինչ վերաբերում է Հոյբունին, ապա Արարատի ապստամբությունից հետո նրա հեղինակությունն ընկավ, և այդ կուսակցությունը բռնեց քայքայման ուղին: Բազմաթիվ ազդեցիկ առաջնորդներ դուրս եկան նրա կազմից: Իսկ նախկին անդամներից ոմանք մեղադրում էին Հոյբունի ղեկավարներին հայերի՝ ՀՅԴ-ի հետ համագործակցելու մեջ, ինչը հանգեցրեց ծանր կորուստների: Հոյբունը արագ հեռացավ քաղաքական ասպարեզից և իր գործունեությունը սահմանափակեց կրթական-լուսավորական աշխատանքներով:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 34:

6. ՀՅԴ-ն և քրդական հարցի միջազգայնացումը

Արարատի ապստամբության պարտությունից հետո ՀՅ Դաշնակցությունը փորձեց քրդական հարցը ներառել Ազգերին Լիգայի օրակարգում՝ որպես հարթակ օգտագործելով Սոցիալիստական Ինտերնացիոնալը: Սոցիալիստներն ունեցին քրդական հարցը ՀՅ Դաշնակցության կողմից բարձրացնում էր Արշակ Զամայանը (Իսահակյան):

ՀՅ Դաշնակցությունը այս հարթակի վրա քրդական հարցն առաջադրել էր դեռևս 1925 թ. Մարսելում կայացած միջազգային համագումարի ժամանակ: Այդ քաղաքականությունը նոր թափ ստացավ Հայբունի ստեղծումից հետո: 1928 թ. հուլիսին «Ազգերի Լիգայի աջակցություն սոցիալիստիկայի» համագումարում ՀՅԴ-ի ջանքերով ընդունվեց կտրուկ բանաձև՝ կապված Թուրքիայի կողմից տարվող ազգային քաղաքականության հետ, ինչպես նաև Ազգերի Լիգային ուղղված միջամտելու կոչ: 1931 թ. օգոստոսին Ցյուրիխում կայացած Սոցիալիստների գործադիր կոմիտեի նստաշրջանի ժամանակ ՀՅ Դաշնակցությանը հաջողվում է քրդական հարցը ներառել նրա օրակարգում: Հայկական կողմից գեկուցողը կրկին Ա. Զամայանն էր⁵⁷: Նա առաջարկեց Ազգերի Լիգայում ազդեցիկ երկրների սոցիալիստական կուսակցություններին անելու հնարավոր ամեն ինչ, որպեսզի ստիպեն իրենց կառավարություններին՝ ձանաչել քրդերի ազատ ապրելու իրավունքը՝ համաձայն ազգերի ինքնորոշման իրավունքի, և վճռական բողոք հայտնել թուրքերի կողմից իրականացված բարբարոսությունների դեմ: Նա նաև բացատրում էր նստաշրջանին, թե ինչու է ՀՅ Դաշնակցությունը բարձրացնում քրդական հարցը: Ըստ Ա. Զամայանի՝ քուրդ ժողովուրդը դեռևս իր ներկայացուցիչը չունի Ինտերնացիոնալում, և իրենք պարտավորված էին զգում ներկայացնելու նրա շահերը, առավել ևս, որ ՀՅ Դաշնակցության շարքերում շատ էին այդ ազգի ներկայացուցիչները, իսկ Մարսելում տեղի ունեցած համագումարի ժամանակ Սոցիալիստները հստակորեն իր կամքն էր արտահայտել ավելի ակտիվ ձևով միջամտելու ձնշված ժողովուրդների ազատագրական պայքարին: Այդ իսկ պատճառով նա պետք է անտարբեր չմնար քրդերի պայքարի հանդեպ, առավել ևս, որ Քուրդիստանում մղվող անընդմեջ կռիվներն իրենց մեջ պարունակում էին մեծ տերությունների միջամտության և այդպիսով՝ տարածաշրջանում մեծ պատերազմի սկսման վտանգ: Ոչ պակաս կարևոր հանգամանք էր նաև այն փաստը, որ Կոմիստերնի գործակալները, օգտվելով քրդերի մեկուսացվածությունից և անօգնական վիճակից, ջանում էին վերջիններիս զցել իրենց ազդեցության տակ: Դա նրանց թեև դանդաղ, բայց հաջողվում էր, և Կոմիստերնի հետ արդեն համագործակցում էին շեյխ Շեմզին և Բեդիխիսան Զադեն: Այդ իսկ պատճառով Սոցիալիստների միջամտությունը կքաջալերեր այն մարդկանց, որոնք թշնամաբար էին տրամադրված Կոմիստերնի նկատմամբ⁵⁸:

Այնուհետև Ա. Զամայանը ներկայացնում էր մարտական գործողու-

57 Տե՛ս **Лазарев М. С.**, նշվ. աշխ., էջ 123:

58 Տե՛ս «Դրօշակ», 1930, N 9, էջ 220:

թյունների ընթացքը, թուրքական գորքերի կողմից քուրդ բնակչության նկատմամբ իրականացված ոճիրները, բոլշևիկների երկդիմի քաղաքականությունը. նրանք սկզբում փորձեցին քրդական շարժումն օգտագործել Իրանի և Իրաքի դեմ, բայց երբ այն տապալվեց, սկսեցին բացահայտորեն օգնել քեմալականներին զենք-զինամթերքով, հրետանիով, ինչպես նաև մարտական գործիքներով և ինքնաթիռներով: ՀՅԴ-ն, ի դեմս Ա. Ջամալյանի, երկյուղ էր հայտնում, որ Թուրքիան կարող է օգտագործել իրանական քրդերի օգնությունն իրենց թուրք ցեղակիցներին որպես պատրվակ՝ Իրան ներխուժելու համար:

Սակայն նստաշրջանը նախագահող Լուի դը Բրուքերը, հասկանալով թե ինչ մեծ բարդություն է պարունակում իր մեջ քրդական հարցը և իր հերթին բերելով ոչ պակաս հիմնավոր պատճառաբանություններ, դեմ է արտահայտվում, որպեսզի Սոցիստերնը արծարծի քրդական խնդիրը միջազգային առաջնություն: Ըստ նրա՝ քրդական հարցը նորություն է Եվրոպայի սոցիալիստների համար, որոնք, անձանոթ լինելով արևելյան սովորույթների տարբերությանը եվրոպականից, դժվարին կացության առաջ են կանգնում: Եվ հետո՝ չնայած ՀՅԴ-ի հավաստիացումներին, ոչ ոք չէր կարող երաշխավորել, որ Թուրքիայում սկսված պայքարը չէր անցնի Իրան, Իրաք և Սիրիա՝ բարդություններ ստեղծելով հարևան երկրների հետ, ինչը կարող էր մեծ պատերազմի առիթ դառնալ, իսկ Սոցիստերնը միշտ դեմ է եղել արյունահեղությանը և գտնում է, որ իրենց նպատակներին հասնելու համար քրդերը պետք է դիմեն պայքարի այլ՝ խաղաղ եղանակների: Եվ ամենակարևորը՝ անհայտ էր Թուրքիայի վրա ճնշում բանեցնելու ուղին, քանի որ այդ ժամանակ Թուրքիան դեռևս Ազգերի Լիգայի անդամ չէր, և նրա դեմ նման հարց բարձրացնելու համար անհրաժեշտ էր որևէ երկրի նախաձեռնությունը, սակայն հանուն քրդերի ոչ մի պետություն չէր ցանկանա սրել հարաբերությունները Թուրքիայի հետ: Այդ իսկ պատճառով անիմաստ էր դառնում նաև Սոցիստերնի միջամտությունը⁵⁹:

Թեև Ա. Ջամալյանը փորձեց իր փաստարկներով հակառակն ապացուցել, սակայն նստաշրջանի մասնակիցների մեծ մասը համամիտ էր Լուի դը Բրուքերին: Արդյունքում նստաշրջանը խոստովանեց Ազգերի Լիգայի միջոցով քրդերի օգտին խառնվելու անհնարինությունը: Նույն բախտին արժանացավ նաև ՀՅ Դաշնակցության՝ Քուրդիստան հանձնաժողով ուղարկելու առաջարկը: Դրանց փոխարեն նստաշրջանը բավարարվեց բանաձևի ընդունմամբ, որտեղ դատապարտվում էին թուրքական բարբարոսությունները, թուրքական գորքերի կողմից իրանական սահմանի անօրինական խախտումները, Ազգերի Լիգայի անգործությունը և Կոմիստերնի գործունեությունը Քուրդիստանում: Դրանով հարցը փակվեց⁶⁰:

59 Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1931, N 3, էջ 40:
60 Տե՛ս **Лазарев М. С.**, նշվ. աշխ., էջ 123:

Եզրակացություններ

– Հայ և քուրդ ժողովուրդների համար քաղաքական կարևոր նշանակություն է ձեռք բերում այն անհերքելի իրողության խորը գիտակցումը, որ Արարատի ապստամբության շրջանում Հայոց Մայր լեռան ծերպերին հաստատված հայ-քրդական զինակցության արդյունքում քենալական Թուրքիան այդպես էլ չկարողացավ ռազմական միջոցներով ծնկի բերել ապստամբներին և նրա կանոնավոր բանակը մի շարք ծանր, անգամ խայտառակ պարտություններ կրեց թվաքանակով ու զինվածությամբ իրեն բազմակի անգամ զիջող քրդական անկանոն ուժերից ու նրանց միացած հայ մարտիկներից: Եվ միայն արտաքին աշխարհի հետ ապստամբների կապն ապահովող Իրանի հանդեպ կիրառված խորհրդա-թուրքական ռազմաքաղաքական շանտաժի և ապստամբական ուժերի ամբողջական շրջափակման արդյունքում է, որ նրանք տեղի տվեցին ու ստիպված էին լքել իրենց մարտական դիրքերը:

– Արարատի ապստամբությունը, չնայած իր պարտությանը, նկատելիորեն բարձրացրեց քրդերի ազգային ինքնագիտակցությունը, ի չիք դարձրեց նրանց թուրքացնելու ծրագրերը: Դա հանգեցրեց նրան, որ համախլամականությունը, որը օսմանյան սուլթանների համար հանդիսացել էր քրդերին իրենց ազդեցության տակ պահելու հզոր լծակ, այլևս չէր գործում, և մահմեդական քրդերն իրենց դաշնակից էին համարում քրիստոնյա հայերին, որոնց հետ միասին ոչնչացնում էին մահմեդական թուրքերին:

– Շնորհիվ նորահայտ արխիվային նյութերի՝ պարզ է դառնում, որ Հայ Յեղափոխական Դաշնակցության դերակատարությունը Թուրքիայում 1920-ական թվականների երկրորդ կեսին ծավալված քրդական շարժման մեջ շատ ավելի մեծ ու նշանակալից է եղել, քան այն մինչ օրս ներկայացրել են արևմտյան և խորհրդային հետազոտողները: Նրանք, ելնելով իրենց երկրների շահերից, հետազայում ամեն կերպ աշխատել են թերագնահատել ՀՅԴ ազդեցությունը և այն ներկայացնել միայն բացասական տեսանկյունից. այն է՝ ՀՅԴ-ի միջամտությունն ավելի վնասեց քրդերի պայքարին, քան օգնեց:

Մինչդեռ՝

– ՀՅ Դաշնակցությունը քրդերի պայքարին հաղորդեց գաղափարական ուղղվածություն, այն բարձրացրեց որակական նոր մակարդակի: Դրա շնորհիվ Հոյբունը կարողացավ համախմբել քրդական հասարակության բոլոր շերտերին, հաշտեցրեց մինչ այդ թշնամի ցեղերին ու կուսակցություններին: Քրդերը, անկախ իրենց լեզվական, կրոնական և ցեղային պատկանելությունից, առաջին անգամ միավորվեցին Անկախ Քուրդիստանի գաղափարի շուրջ:

– Մեծ էր ՀՅԴ-ի դերը նաև կազմակերպական առումով: Նա քրդերին փոխանցեց իր հարուստ փորձը՝ կապի, դրամական միջոցների հայթայթման, մարտական ջոկատների կազմավորման, հետախուզության, մամուլի հրատարակման գործում:

- ՀՅ Դաշնակցության շնորհիվ քրդական հարցը դուրս եկավ միջազգային ասպարեզ: Եվրոպայում և ԱՄՆ-ում մեծ աշխատանք էր տարվում քրդերի անվան շուրջ դրական կերպար ձևավորելու համար, որոնց մինչ այդ արևմտյան հասարակությունը ծանոթ էր միայն բացասական կողմից: Ճիշտ է՝ Սոցիալիստերի միջոցով ՀՅԴ-ին չհաջողվեց հասնել որևէ էական որոշման, սակայն այդ աշխատանքները ուղի հարթեցին քրդական հարցի միջազգայնացման համար:

- ՀՅ Դաշնակցության մասնակցությունը քրդական շարժմանը Իրանի համար նույնպես ունեցավ դրական նշանակություն: ՀՅԴ-ի նշանակալի ազդեցությունը քրդական ցեղերի վրա զերծ պահեց նրանց բոլշևիկների և քեմալականների սադրանքներից: Իրանի համար քրդական ցեղերը մշտական անհանգստության օջախից վերածվեցին հուսալի զինական ուժի: Դրա շնորհիվ կանխվեց նաև բոլշևիկների և քեմալականների կողմից ծրագրավորված՝ իրանական քրդերի ներգրավումը հակաբրիտանական գործողությունների մեջ, ինչն, անկասկած, առաջ էր բերելու Մեծ Բրիտանիայի համարժեք պատասխանը՝ Իրանի համար ծանր հետևանքներով:

Այս ամենը պարզորոշ կերպով ապացուցում է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կարևոր դեր է խաղացել քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ծավալման և նրա գաղափարախոսության բյուրեղացման գործընթացում, ինչն իր հերթին, 1920-1930-ական թվականների սահմանագծին, լուրջ անդրադարձ է ունեցել տարածաշրջանի տերությունների, մանավանդ ԽՍՀՄ-ի ու Իրանի հարաբերություններում՝ քրդական հարցը վերածելով տարածաշրջանային քաղաքականության լուրջ գործոնի:

Արամ Ս. Սայիյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 1920-1930-ական թվականների քրդական ապստամբությունների և թուրք-քրդական ու հայ-քրդական հարաբերությունների պատմության հիմնահարցերը:

Summary

THE REBELLION OF ARARAT IN 1926-1930

In the context of the cooperation of AR Federation and Khoyboun and regional developments

Aram S. Sayiyan

So far unknown pages of the cooperation among AR Federation and Khoyboun in the period of Ararat rebellion in 1926-1930, which was Kurdish people's national liberation struggle, are discussed in this article based on newly discovered archival records and the handling of the materials. We have shown AR Federation's comprehensive political, organizational and ideological support

to the Kurdish movement, which secured its spread and success from 1927 to mid-summer 1930. The article unlocks the secret agreements among Ar Federation's eminent figure Ruben (M. Ter-Minasyan) who has arrived to Teheran in 1929 and Iran's court minister Temurtash, strengthening Armenian-Kurdish military cooperation and securing the Iranian authorities' support.

Denying unfounded hypotheses spread by the Soviet historiography, the author of the article proves that it was not the Turkish army's role that was decisive in the defeat of Ararat rebellion, but the Soviet Union's support to Kemalist Turkey. Soviet Union's overt political blackmail against Iran in August 1930 broke Reza Shah's insistence and led to the termination of assistance to the rebels by small Ararat's pathways.

Резюме

АРАРАТСКОЕ ВОССТАНИЕ 1926–1930 ГГ.

**В контексте сотрудничества АРФ Дашнакцутюн–Хойбун и
регионального развития**

Арам С. Саиян

В статье раскрываются неизвестные страницы сотрудничества АРФ Дашнакцутюн и Хойбун в период Араратского восстания 1926–1930 гг., которая была национально-освободительной борьбой курдского народа. Политическая, организационная и идеологическая поддержка АРФ Дашнакцутюн курдскому движению обеспечило его распространение и успех с 1927 до середины лета 1930 г.

Статья проливает свет на тайное соглашение 1929 г. между выдающимся деятелем АРФ Дашнакцутюн Рубеном, и дворцовым министром Ирана Тиймурташем, которое укрепило тыл Араратского восстания.

Отрицая необоснованные гипотезы советской историографии, автор статьи доказывает, что решающую роль в разгроме Араратского восстания сыграла не турецкая армия, а дипломатическая и военная поддержка Советского Союза кемалистской Турции. Открытый политический шантаж СССР против Ирана в августе 1930 г. сломил настойчивость Реза-шаха и привел к прекращению помощи повстанцам по тропам Малого Арарата.